ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՇԱՀՆԱԶԱՐ

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ
ՊՈԼԻՍ, ՊԱՊԸ—ԱԼԻ ՃԱՏՏԷՍԻ
Իպուսսուտ (Սէֆէթճի) փողոց Թիւ 38

BUREAUX DU JOURNAL HAÏRENIK
Avenue de la Sublime-Porte rue Eboussuoud No. 38
CONSTANTINOPLE

10 ՓԱՐԱ

ՀԱՅՐԵՆԻՔ
ՕՐԱԳԻՐ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ համար	300 Թիւ	75 ղրշ.	Մէճիտ
» »	150 »	40 »	»
Գաւառներու	300 »	100 »	»
»	150 »	50 »	»
Օտար երկիր երկօրեայ	300 »	25 ֆրանք	
» » ամենօրեայ	300 »	30 »	
Ռուսիա	300 »	10 րուպլի	

(Միւս պայմանները տեսնել 4րդ երեսը)
Խմբագրութեան ուղղուած նամակ կամ այլ գրութիւն ետ չի դարձուիր։

درعلیه‌ده باب عالی جاده‌سنده ابوالسعود سوقاغی نومرو ۳۸
«هایره‌نیك» غزته‌سی اداره‌سنه

10 ՓԱՐԱ

Ո՞Վ Է ՆԿԱՐԱԳԻՐ ԱՊԱԿԱՆՈՂԸ

ՑԵՂԱՅԻՆ ՎՏԱՆԳ ՄԸ

Կար հրապարակին վրայ Աղթամարայ և Վանի Նոր-սերնդականներու խնդիր մը, երբոր Հայրենիք սկսաւ երեւիլ։ Մենք չէինք ուզեր որ զանոնք մէջտեղ նետեցինք առաջին անգամ։

Մեղք մըն ալ ո՛չ ոք կրնայ մեզ համարել որ այս խնդիրներով զբաղեցանք. լրագրի մը պաշտօնը վերջապէս չի կայանար ուրիշ բանի մէջ։

Ցանցանք մը չի գործեցինք, լրագրական տեսակէտով, տեղ մը յատկացնելով Զաւէն վարդապետի առաջին նամակին, որ մեզ կը բերուէր հրապարակութեան խնդրանօք, և որ կը վերաբերէր թէ՛ հայ ընկերական երեւոյթի մը և թէ՛ ազգային կալուածներու։ Լրագրական ուղղամտութեան ալ հակառակ չի վարուեցանք խոյն համրութեան ծանօթացնելով իր երկրորդ նամակն ալ։ Զենք գիտեր թէ այս եղանակներէն դուրս լրագրի մը համար հնարաւորութիւն կա՞յ օգտակար դեր մը կատարելու։

Պէտք է որ երբ ժողովուրդ հետզհետէ որոշ, պայծառ և ուղիղ դատում մը ունենանք լրագրական արուեստին վրայ։ Անգամ մը որ այդ դատումը հիմնուի և հաստատուի, ժողովուրդն ալ ըստ այնմ կը պահանջէ և ըստ այնմ ալ լրագրութիւնը կը գործէ։ Այս դատումը հետզհետէ ձեւաւորուելու վրայ է, և այսօր ժողովուրդին առջեւ կը դնենք պարագայ մը, յոյժ կարեւոր պարագայ մը, որու մասին պէտք է որ իր դատաստանը տայ։

* * *

Զաւէն վարդապետ գրած էր իր առաջին նամակը Գաճիրեբի Գ. էֆ. Իսագուլեանին, իբրեւ առաջնորդ բաղաքի մը հայ ժողովուրդին։ Խօսած էր Աղթամարայ մասին, խօսած էր հայ նոր սերունդին ապականացման վտանգին վրայ։ Զաւէն վարդապետ իբրեւ առաջնորդ, և այսպիսի խնդիրներու վրայ խօսած պահուն, ա՛լ եւս ինքն իրեն չի պատկանիր այլ մեզ, բոլոր Հայերուս, մեր դոյքերն են ինքն և իր խօսքերը, որովհետեւ ատոնք կը վերաբերին հայ ազգին կալուածներուն և հայ ազգին վերականգման, յառաջացման և փրկութեան գործին։ Այս պարագային մէջ Զաւէն վարդապետ պարզ անհատ մը չէ, և ոչ ալ պարզ կրօնական մը, այլ ազգային պաշտօնով զգեստաւորեալ ազգային պաշտօնատար մը։ Այս պաշտօնատարական հանգամանքն է որ մ'ն մեր սեփականութիւնն է, որուն վրայ ազգովին իրաւունք մը ունինք, որուն ամէն մէկ խօսքը ազգային խնդիրներու մասին նոյնիսկ իր հրամանին հակառակ ապրելու իրաւունքն ունինք։

Զաւէն վարդապետ իբր առաջնորդ կը պատկանի հայ ազգին։

Արդ, ի՞նչ էր այն՝ որու վրայ կ'ողբար ու կը հառաչէր Զաւէն վրդ.։

Մտէ՛ք Աղթամար կ'ըսէ ա՛ն, և տեսէք թէ խաչ մը մնացե՞ր է հոն. տեսէք թէ ինչպէս ամայացած է և մերկացած է բոլորովին։

Ահաւասիկ ազգային կալուած մը որ կողոպտուեր է Զաւէն վարդապետի յայտարարութեամբ։ Պէտք չէ՞ր արդեօք որ Հայրենիք արձագանգ դառնար առաջնորդի մը այս ողբուկծին, որքան որ ալ այդ ողբը վարդապետը կուլար վաճառականի մը ուղղեալ նամակի մը մէջ։

Պիտի մեղադրէ՞ք զիս, կը գոչէ ա՛ն, եթէ ցաւս յայտնեմ Վասպուրականի մէջ ապրող հողաբաշխ ժողովրդեան համար որ պազար-fkorի մը պէս կը դիտէ իր հայրենի պատուական օձախին քանդումը, որդիական և ծնողական յարաբերութեանց խզումը, նախնեաց սուրբ ոգիին թշնամանումը, անոնց յիշատակաց հայհոյումը, տակաւին ո՞րն ըսեմ, անկարելի է որ զգայուն՝ Հայու մը սիրտը արիւն արցունք չթափէ ի տես այս զարհուրելի վիճակին։

Զաւէն վարդապետ չի կասկածելով թէ իր բարեկամը Իսագուլեան էֆ. նամակը օր մը հրապարակութեան կուտայ, խօսած է բոլոր սրտին անկեղծութեամբը, առանց արդեւքի, առանց երկիւղի։ Կրնայի՞նք միթէ մենք մտքէ անցունել թէ առաջնորդ մը կրնար, իր մէկ մտերիմ բարեկամին ամէն ականջէ հեռու խօսած պահուն իսկ, սուտեր պատմել ազգային կալուածներու և հայ ժողովուրդին վիճակին մասին։ Բայց նայինք սուտը ո՞ւր է, եթէ կայ։

Երկու նամակներէն ո՞րն է այն որ ճշմարտութիւնը կը պարունակէ։

Azatamars կը կոչէ երկրորդը՝ hërwm—ëwrmak, և կ'անուանէ զայն ապտակ մը ուղղեալ Հայրենիքին որուն պիտի հետեւին եղեր ուրիշ ապտակներ ալ։ Հերքո՞ւմ։ Անտարակոյս, Զաւէն վարդապետ գրած է երկրորդը որպէս զի ատիկա առաջինին հերքումն ըլլայ, բայց և որ ամենեւին հերքումն չէ, այլ սպառնալիքներով կոլորուած գրութիւն մը որ կը ճգնի բաւական վարպետութեամբ թէ հաստատել, թէ հերքել և թէ մանաւանդ վարդապետին գլուխը ազատել անոր վրայ խոյացող սպառնալիքներէն։

Բաղդատեք մը ընենք այս վաւերագրերէն։

Զաւէն Վ. կը գրէր 1 Յուլիս 1909ին։

Ես քանի մը ամսուան քննութեամբս ի Վան սա համոզման եկած եմ թէ անպատասխանատուութեան խառնաշփոթ հովը Վասպուրականի զաւակները հեռացուցած է անոր ծոցէն, եկէք.... և տեսէք այս մենաստանները... ինչպէս կողոպտուած դէպ ի կործանում կը դիմեն և այն ալ ոչ թէ Թուրքի կամ Քուրդի ձեռամբ, այլ անարժան հայորդիներու կործանարար ձեռքով։

Կը հարցնենք։ Հայորդի բառով միթէ վարդապետը կիմանալ չի՞ սար Դաշնակցականները, զորս իր այդ նամակին մէկ ուրիշ տեղը արդէն անուանումին յիշած էր և զոր Հայրենիք դիտմամբ ջնջած էր անձնականութեանց կռիւ չի յարուցանելու համար։

Իսկ 23 Սեպտ.ին, սպառնալիքներէն ետք, նոյն վարդապետը կը գրէ։

Գալով Վանայ վիճակին վանօրէից (վերը յիշուած մենաստանները) անկման խնդրոյն, այս մասին ալ կրնամ յայտարարել թէ իմ պաշտօնավարութեանս տեւողութեան ամբողջ շրջանին մէջ Դաշնակցութիւնը չէ միջամտած անոնց մատակարարութեան։

Մենաստանները որք ըստ առաջին նամակին դէպի կործանում կը դիմեն, չեն մատակարարուած, ըստ երկրորդ նամակին, Դաշնակցութեան կողմէ, վարդապետին պաշտօնավարութեան ատեն, որ մէկ քանի ամիս տեւած է։ Ուրեմն այդ վանօրայք որոնց աւերումը իրողութիւն մըն է, ունեցած են իրենց անկումը Զաւէն վարդապետի կարճատեւ պաշտօնավարութենէն առաջ։ Այդպէս թող ըլլայ բայց

—Որո՞ւ ձեռքով, կը հարցնենք։

—Ասոր ալ վարդապետը կը պատասխանէ ըսելով, անարժան հայորդիներու ձեռքով։

—Ո՞վ են այս անարժան հայորդիները։

Պատասխանն արդէն գիտենք։

Ու և է մարդ մը՝ որ ուշի ուշով կը կարդայ երկու նամակները, դատելով բառերէն ու ոճէն, կը համոզուի շուտով թէ երկրորդ նամակը հերքում մը չէ առաջինին։

Մեր մասին գալով, մեր համոզումն այն է թէ Զաւէն վարդապետ գրեց այս նամակը վախէն։ Արդէն 1 յուլիս մտերմական նամակին մէջ կը գրէր հետեւեալը.

Վստահ եղէ՛ք թէ այս լեզուով կը խօսիմ ժողովուրդին—սիրտ տալու համար անոր, որ սարսափած եւ ընկճուած է վերուց յիշատակուած պլան պէքներուն լուծին ներքեւ որ աւելի կը ճնշէ անոր վրայ քան Թուրք երբեմնի կառավարութեան կամ քրդութեան լուծը. ես միայնակ մնացեր եմ այս ահագին հոսանքին դէմ և սարսուռած դիմադրելու ինձ դէմ ուղղուած ադտոտ զէնքերուն։

Ինչ կրնան եղած ըլլալ այս ադտոտ զէնքերը։ Անգիտենք։

Երեկ գրեցինք որ նամակէ մը իմացած էինք թէ Դաշնակցականները Զաւէն վարդապետը թերօրի ենթարկելէ և հետեւաբար զինքն իրենց սարսափին տակ առնելէ ետք խնդրեր էին իրմէ որ օգնէ իրենց լրագրական յարձակումները դադրեցնելու։

Այդ նամակին հեղինակը, ինքը Զաւէն վարդապետն է, որ այսպէս մէկ կողմէ մեզ կը գրէր իբրեւ թէ հերքում մը և միւս կողմէ Պոլիս իր մէկ ծանօթին կ'իմացնէր իր թերօրի ենթարկուած ըլլալը։

Այս գործին մէջ եթէ ապտակ մը կայ, ատիկա ուղղեալ է Հայրենիքի վրայ յարձակող թերթին։ Բայց քիչ մը վեր բարձրանանք այս ադտոտութիւններէն։

* * *

Տարակոյս չկայ որ այս եկեղեցականը արիութիւն ցոյց չէ տուած երբոր պահանջուած է իրմէ այդ հերքումը որքան որ ալ հերքում չէ։ Անշուշտ վախցեր է, ակարացեր է։ Բայց Զաւէն վրդ. այժմ, յաչս ամենուն, նկարագրէ զուրկ եկեղեցական մըն է, որքան որ ինքն իրմէ չէ եղծած իր նկարագիրը, և ուրիշ մեղաւոր մը կայ։ Գլխաւոր մեղաւորն անոնք են որ սպառնալիքի տակ նկարագիրներու ապականութիւնը կը պատճառեն։

ՎՐԴՈՎԻՉ ԶՐՈՅՑՆԵՐ.—Ատափազարի մէջ Չերքէզներու կողմէ ջարդ մը բանի գրաւուած ըլլալուն վրայ՝ առջի օր զրոյց եղած էր թէ Ատափազարի մէջ խառնակչութիւն մը պատահած է, բայց Ներքին գործոց նախարարութիւնը բացարձակապէս կը հերքէ այդ զրոյցը։

ՕՐԸ ՕՐԻՆ

ԱԶԳԵՐՆՈՒՍ ՊԱՏԻՒԸ

Սրտաստիմանեան թերթի մը մէջ կը կարդամ հետեւեալը.—

«Բարիզի թերթերը ծանօթ Հայու մը յաղթանակին լուրը կը բերեն մեզի։ Բարիզական Տիգրան խան Քելէկեանի ձին՝ Մոնթիէյլօ՝ վերջին ձիարշաւին մէջ (Ջուր և պատ ցատկելու) առաջին մրցանակը խլած է։

«Անցածները եւս Հայ խանին մէկ ուրիշ ձին մրցանակ մը շահած էր։

«Ասիկա պատիւ կը բերէ ազգին որուն կը պատկանի Քելէկեան խան, որովհետեւ շատ ցաւալի է որ օտարները Հայերը իրենց ջարդերովը կը ճանչնան միայն և այս վաղեմի ըմբռնումին մէջ հաճելի փոփոխութիւն մըն է տեսնել որ Հայ մը կը զբաղի նաև սփորթի կեանքով և կը գիտնայ գերազանցել ևս։»

Զեմ գիտեր թէ Մոնթիէյլօյի յաղթանակը ձեր հայկական կուրծքերն ալ հպարտութեամբ կ'ուռեցնէ՞, բայց կը խոստովանիմ որ ես իմ մասիս պատիւի բարձրացում մը չեմ զգար։ Գուցէ դէչ ազգասէր մըն եմ՝ անոր համար։

Նախ որ ձին հայկական անուն մը չի կրեր և, յետոյ, հաւանօրէն չի սերիր Հայաստանի այն նժոյգներէն որոնցմէ տարեկան քանի հազար հատ իբրեւ տուրք կը վճարուէին Պարսիկներու արքայից արքային։ Բայց նոյն իսկ եթէ զուտ հայկական ձի մը ըլլար, ինչո՞ւ իր յաղթանակը պատիւ պիտի բերէ մեր ազգին։ Ըստ իս, նոյն իսկ եթէ Տիգրան Խան Քելէկեան ինք վազէր կրկէսի մը մէջ և առաջին մրցանակը շահէր նոյն մտքէս չպիտի անցնէր բարձրացած հպարտութեամբ մը յոխորտանալու։

Ազգերնուս պատիւը չորքոտանիի մը սրունքներուն մէջ փնտռելը կարծեմ շատ անպատուաբեր բան մըն է մեզի համար։

Բայց մեր թերթերը ընդհանրապէս շատ բարակը չեն նայիր և «ազգիս պատիւը» կը փնտռեն ու կը գտնեն այնպիսի տեղեր՝ որ ընաւ ընթերցողներու մտքէն չանցնիր։

Այսպէս, օրինակի համար, ընա՛ւ մի՛ զարմանաք եթէ օր մըն ալ սա տեսակ բաներ կարդաք։

«Սրտի անհուն բերկրութեամբ կը ծանուցանենք թէ կղզիաբնակ ազնուափայլ Մարկոս էֆէնտիի աւանակը, որ քաջածանօթ է կղզի ամառանոց գացող բոլոր բարձր դասին, այս օրերս քուռակ մը աշխարհ բերած է որ իր տեսակին մէջ եզական է, մորթին կէսը ամբողջովին սեւ և միւս կէսն ալ ճեփ ճերմակ ըլլալով։ Մարկոս էֆէնտի այս առթիւ բազմաթիւ շնորհաւորութիւններ ընդունած է թէ՛ Հայ և թէ՛ օտարազգի շատ մը անձնաւորութիւններէ։ Այս քուռակը ճշմարտապէս պատիւ կը բերէ մեր ազգին և մասնաւոր կուտայ շատ դատումներ։ Իզմիր թէ Մարկոս էֆէնտիի աւանակին պէս ուրիշ աւանակներ ազգիս արժանապատուութիւնը այսպէս միշտ բարձր պահելին յաչս օտարաց։ Փափաքելի է որ ազգային իշխանութիւնը պաշտօնապէս շնորհակալութեան ուղերձ մը մատուցանէ Մարկոս էֆէնտիի ազգերնուս պատիւը բարձրացուցած ըլլալուն համար։»

ԵՐՕՏ

ՆՈՒԱԳԱՀԱՆԴԷՍ
Ի ՆՊԱՍՏ
Ս. ՓՐԿՉԻ ԱԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ

Ցառօջիկայ կիրակի ցերեկ ժամը 8ին նուագահանդէս մը պիտի սարքէ Գաբրիէլ էֆ. Նորատունկեանի հովանաւորութեան ներքեւ, Բերա, Թէփէ Պաշի Թատրոնական Թատրոնին մէջ, ի նպաստ Ս. Փրկչի Ազգ. Հիւանդանոցին, և որու պիտի մասնակցին առաջնակարգ արուեստագէտներ՝ Չէքի պէյ (Ջութակ), Ճէմիլ պէյ (Թանպուրա), քոմիթէս տը Մոսայ, Մադամ Թորիչ և Պն. Ա. Ֆըրոտըլեան (երգ)։

Մուտքն է մէկ օսմանեան ոսկի։ Գանձապետ Կարապետ էֆ. Թանեսպըրունեան, Կալաթա, Մէհմէտ Ալի փաշա խան։

Վստահ ենք որ մեր առատաձեռն ազգայինք պիտի մասնակցին սիրայօժար այս նուագահանդէսին որ պիտի հայթայթէ իրենց բարերարական պատեհ մը իրենց բաժինը տալու հաճոյքին հետ, արուեստագիտական շատ նուրբ վայելք մը։

ՆԱԽԱՐԱՐՆԵՐՈՒ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

Ա. ԳԱՐԱՀԻՍԱՐ, 5 Հոկտ. 1909

Սելճուգեանց այս քաղաքը, հիմնուելէն ի վեր գուն առաջին անգամն է որ միասին ուղեւորող Ներքին և Ելմտական երկու նախարարներու այցելութիւնը կ'ընդունի։ Ասկէ 35 տարի առաջ երբեմնի սադրազամ պաշտօնանկ Հիւսէյին Ավնի փաշան՝ իր հայրենիքը աքսոր գացած ատեն ասկէ անցած և երկրորդ անգամ Միթ-Եպարքոս և սպարապետութեան կրկնակ պաշտօնին կոչուելով վերադարձին՝ դարձեալ քաղաքէս անցած է, ահա այն ատեն Գարահիսար կրկնակ նախարարի մը այցելութիւնը ընդունած է. սակայն անշուշտ որչա՛փ տարբերութիւն 35 տարի առաջուան և հիմակուան այցելութիւններուն միջեւ։

Վերոյիշեալ զոյգ նախարարները ուրբաթ գիշեր ժամը 7ին մասնաւոր կառախումբով Գոնիա անցան՝ ընկերակցութեամբ Անատոլուի երկաթուղեաց ընդհանուր Տնօրէն Մ. Հիւկնէնի, և գացին մինչեւ Պաղտատի երկաթուղիին վերջին կէտը եղող Պուլկուրլու տեղը։ Առջի օրուընէ արդէն լուրը հասաւ թէ՝ կիրակի ժամը $4^1/_2$ին հոս պիտի գտնուէին և մի քանի ժամ մնալէ վերջ պիտի մեկնէին։ Երէկ առաւօտ կայանը սաստիկ բազմութեամբ լեցուած էր, երբ ժամը 5ին քառորդ մնացած կառախումբը, կանգ առաւ։ Ցիշեալ նախարարները ընկերակցութեամբ քաղաքային և զինուորական պաշտօնէից, ուղղակի կառավարական պաշտօնատունը առաջնորդուեցան ուր կէս ժամու չափ հանգստանալէ վերջ Ելեմուդ նախարար Ճավիտ պէյ, կառավարական պաշտօնեաներու սանդուխին վրայ ճառախօսութեամբ մը որ անվերջանալի ծափահարութեամբ կ'ընդմիջուէր, ներկայ բազմութեան դառնալով մանրամասնօրէն բացատրեց Սահմանադրութեան օգուտները, բոլոր Սահմանադրութեամբ կառավարուող ազգերուն ձեռք բերած զարգացումը. «Թուրքաց մինչեւ հիմա ամէնէն ետ մնալուն գլխաւոր պատճառը, ըսաւ, Երկրորդ բռնապետին շատ մը անարժաններու պատուանշան և աստիճաններ տալով խեղճ ժողովուրդին գանգատները անլսելի—ընելու համար բռնած դիրքն էր։

«Ա՛լ հիմա սահմանադրական կառավարութիւնը ձեզի ո՛չ նշան ո՛չ ալ աստիճաններ ունի տալիք. կառավարութիւնը ձեր առջեւ անսահման ասպարէզ և ազատ շունչ առնելու համար սիրտ տուած է. ուրեմն ամէն ոք, առանց կառավարութեան գործոց միջամտելու թո՛ղ իր գործով զբաղի, թո՛ղ ամէն ոք իրեն համար յարմար գործ և արհեստ մը ճարէ»։ Ասպա խօսքը հոն գըտնուող գիւղացիներուն ուղղելով, ըսաւ. «Էֆէնտիներ, պաշտօնեայ ըլլալու համար մի՛ աշխատիք. աշխատեցէ՛ք ազատական արհեստաւոր, երկրագործ և վաճառական ըլլալ։ Դուք ալ, ըսաւ ամբոխին դառնալով—զաւակնիդ պաշտօնեայ ընելու մի՛ փափաքիք, աշխատեցէք որ անոնք երկրագործ, արհեստաւոր և վաճառական ըլլան. կը տեսնեմ թէ ձեր արտերը հողագործութեան շատ յարմար են, սակայն նոր գործիք չգործածելնուդ՝ գոհացուցիչ արդիւնք չէք կրնար կոր առնել. ա՛լ ձեր պապերէն մնացած հին գործիքները մէկդի նետելով՝ նորերը գործածեցէք որպէս զի հողը ստիպուի ձեզի իր ծոցին ունեցածը առատապէս տալ»։ Նկատողութեան արժանի էր համերաշխութեան մասին տուած խրատները. «Բռնապետութեան շրջանը, ըսաւ, բոլոր տարրերը իրարու թշնամի ըրած էր. այսօր ալ այդ գաղափարները, այդ թշնամութիւնները մէկդի դնելով, առանց ցեղի և կրօնքի խտրութեան, ամէնքդ ա՛լ իբր ջերմ Օսմանցիներ իրարու փարած՝ հայրենեաց օգտին աշխատեցէք։ Տեսէք Եւրոպան, Ամերիկան, որոնց յառաջդիմութիւնը զարգացման կէտը հասած է. համերաշխութեան շնորհիւն է. ասոր համար մենք միշտ երկու քայլ առնելու ենք՝ որպէս զի անոնց հասնինք»։ Խօսելով էշրաֆներու մասին ըսաւ թէ՝ ա՛լ ատոնց դարը անցած է, գիւղացիին և գիւղացիին ծառային և այսինչ էշրաֆին կամ աղային միջեւ, օրէնքի տեսակէտով երբեք տարբերութիւն չկայ. օրէնքին քով երկուքն ալ հաւասար են. ա՛լ պզտիկի ու մեծի տարբերութիւն չկայ, եթէ կայ բան մը որ ամէնէն մեծ ըլլայ՝ այն ալ օրէնքն է միայն որուն հնազանդիլ պարտաւորուած ենք...։

Սոյն ատենախօսութենէն վերջ, միեւնոյն հանդէսով մեկնեցան թէքքէն այցելեցին. հոն ալ կէս ժամ մնալէն վերջ, Ազգ. առաջնորդարան եկան, սակայն դժբախտաբար այս այցելութիւնը անակնկալ ըլլալուն՝ պէտք եղածին պէս չը հիւրասիրուեցան. քառորդ ժամ ալ հոս մնալէն վերջ, զօրանոց այցելեցին ուրկէ ուղղակի կայարան իջնելով ժամը $7^1/_2$ին միեւնոյն կառախումբով մեկնեցան։ Կ'ըսուի թէ՝ Քէօթահիա, Էսքիշէհիր հանգչելով Էնկիւրիւ պիտի երթան և անկից ալ Պոլիս պիտի վերադառնան։

Զոյգ նախարարներուն կառավարական պաշտօնատունը գտնուած միջոցին, առաջնորդական փոխանորդ Տէր Հայրը ազգին կողմանէ խմբագրուած աղերսագիր մը ներկայացուցած է Ներքին Գործոց նախարար Թալէաթ պէյի, որով՝ 7 տարի առաջ այրած Հայոց Թաղին սալայատակները և կոյուղիները քաղաքապետութեան կողմէ շինել, աղքատ երկրագործներուն սերմնցու բաժնել և պատժական նախադատ ատենի նախագահը—որ թէ՛ գործով և թէ՛ զգացումով յետադիմական թիւ մըն է և միշտ քրիստոնեայ դատերը օրերով ձգձգել և զանոնք անիրաւ հանել կ'ուզէ— այլուր փոխադրել խնդրուած է։ Ազգը ատոնց արդիւնքին կ'սպասէ։

ԶԱՐԻՆ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ.— Լիվատիայէն կը հեռագրեն թէ Զարը նախընթաց օր Օտեսա մեկնեցաւ Սթանտարտ զօրանաւով, ընկերակցութեամբ Պ. Իսվոլըքիի։

Հազիւ ռուս դեսպանատունը յայտարարեց Թրիպոլեայի թղթակցին՝ թէ Զարին Օտեսայէն մեկնելէն ետքը միայն պիտի գիտցուի թէ ո՞ւր տեղի պիտի ունենայ Իտալիոյ Թագաւորին հետ տեսակցութիւնը։

Օտեսայի մէջ խիստ զգուշութիւններ ձեռք առնուած են։ —Թէպէտ պատրաստութիւնները առաջ կը տարուէին Ռաքոնիճի մէջ, բայց քանի մը թերթեր կ'ըսեն թէ գուցէ Մեսինայի մէջ տեղի ունենայ տեսակցութիւնը։

Պելկրատէն կը հեռագրեն թէ Զարին և Իտալիոյ Թագաւորին տեսակցութեան միջոցին, Սերպիական խնդիրը խնամով պիտի քննուի։

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՑ
ՆԱԽԱՐԱՐԻՆ ՀԵՏ

«Նեճի Կազեթա»ի խմբագիրներէն մէկը, երկու շաբեկան տեսակցութիւններ ունեցած է, Անատոլուի գիծին վրայ ճամբորդութենէ դարձած երկու երիտասարդ նախարարներուն հետ։

Այսօր կը հրատարակենք միայն Թալէաթ պէյի հետ տեսակցութիւնը, վաղուան թողլով Ճավիտ պէյի հետ տեսակցութիւնը։

Խմբագիր.— Ձեր պտտած տեղերը, հարստութեան և անդորրութեան տեսակէտով, ի՞նչպէս գտաք։

Նախարար.— Հարստութեան մասին չափազանց գոհացուցիչ չէ. ընականաբար Եւրոպական երկրի մը հետ չկրնար բաղդատուիլ։ Բայց կրնամ ըսել թէ՝ ցաւալի վիճակ մը չեն պարզեր։ Մեր բոլոր տեսած տեղերը շէնութեան յարմար է։ Կ'ապահովցնեմ հաստատապէս որ, լաւ կառավարութեան մը տակ, այս բերրի ու արդիւնաւէտ տեղերու բնակիչները, խիստ երջանիկ և հարուստ վիճակ մը պիտի ունենան։ Ժողովուրդին կարեւոր մէկ մասը՝ բռնապետութեան անգութ ճիրաններուն տակ ճզմուած մնացած ու աղքատացած է։ Ասոր յաջորդող երաշտութիւնն ալ աղքատութիւնն ու թշուառութիւնը աւելցուցած է։ Այս պատճառով, գիւղացիներուն սերմնցու բաշխելու համար ձեռք առնուած միջոցները՝ շատ յարմար եղած են։ Երկրագործները Սահմանադրութիւնը բարոյապէս կրնան հասկնալ, բայց ասկէ աւելի, անոր նիւթական օգուտներն ալ կ'ուզեն տեսնել։ Իրենց կողմէ առանց ո՛և է դիմում ըլլալու, կառավարութիւնը զիրենք մտածելով՝ սերմնցու բաշխելը, առանց բացառութեան, ամէն տեղ մեծ ազդեցութիւն մը յառաջ բերած է։ Հաստատապէս կրնանք յուսալ որ, այսօրուան աղքատ գիւղացիները,

ԱՒԱՐԱՌՈՒԹԵԱՆ ԴԷՄ ԿԸ ՊԱՀԱՆՋԵՆՔ
ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԵԱՆ ՕՐԷՆՔ ՄԸ

վալը, բաղդատաբար, հարուստ պիտի ըլլան։ Ուր որ գացինք և անսանք, առաջին հարցումնիս եղաւ անդորրութեան խնդիրը։ Տեսայ որ Գոնիայի կուսակալութեան մէջ մեր հանդիպած անդորրը՝ անդորրութիւնը գոհացուցիչ վիճակի մը մէջ էր։ Մասնելով որ, պաշտօնեաները բացատրութիւն տալէ կը զգուշանան, ժողովուրդի անհատներուն զատ զատ հարցուցի թէ՝ անդորրութիւնը ապահովուա՞ծ է թէ ոչ։ Ըսին թէ՝ ընդհանրապէս գոհ են անդորրութենէն, և ապստամբ Սուլթանին ու Սահմանադրական կառավարութեան զէնք բռնողներուն համար գիշեր ցերեկ կ'աղօթեն։ Ընդհանուր կուսակալութիւնն ալ, իր չըլլալով, այս գոհացուցիչ վիճակին մէջ է։ Միայն Պրուսայի կուսակալութեան մէջ Երկաթուղիի գիծերուն վրայ գտնուած անցքերն անցնելու ատեն, գիւղը ժամը հօթնին, ժողովուրդը մեզ արթնցուց և անասուններու գողութեան համար բողոք ըրաւ։

Պօղոսեան գիւղին գայմագամութեան փախուստին համար մեզի մատուցուած խնդիրներու մէջ, անասունի գողութեան մէկ ալ խնդիր կար։ Այս խնդիրը ուշադրութեամբ քննեցի։ Այս գողութիւնը քանի մը ամիս առաջ գործուած է, բայց գողերուն մինչեւ հիմա չգտնուիլը, դուն իր ազդեցութիւնը մնացուցած չէ։ Կուսակալին ամփոփապէս ծանուցի որ պէտք եղածը ընէ։ Նորէն կը կրկնեմ, մեր անցած տեղերուն մէջ՝ անդորրութիւնը կատարեալ է, (Աստուծոյ շնորհքովն ալ)։ Այս պատճառով, ժողովուրդը վերջին աստիճան ուրախ ու գոհ է։ Ամէն ոք կը պատրաստուի յառաջդիմութեան։ Անտարակոյս, երբ անդորրութիւնը շարունակէ, յառաջդիմութիւնն ալ հիմնովի կերպով կուգայ։

Խմբ. — Այս տեղերու հարստութեան աղբիւրները ի՞նչ է։

Նախ. — Մեր անցած տեղերու մէջ, հարստութեան աղբիւրներէն ամենակարեւորը երկրագործութիւնն է։ Ամէն կողմ նշմարեցինք որ, երկրագործական նոր մեքենաներու համար մեծ բաղձանք կայ։ Եթէ կառավարութիւնը իրենց օգնէ, լաւ է որ, երկրագործութեան անտարակոյս շատ յառաջ պիտի երթան։

Խմբ. — Զանազան տարրերու մէջ հակառակութիւն կա՞յ։ Եթէ կայ, ինչպիսի վիճակներէն ծագում առած է։ Այս հակառակութեան վերջանալը ի՞նչ տեսակ միջոցներով կարելի է։

Նախ. — Փա՛ռք Աստուծոյ, մեր այցելած ու անցած տեղերուն մէջ, իսլամ, քրիստոնեայ, բոլոր ժողովուրդը իբր մէկ մարմին միացած ու համերաշխ է, ու եղբայրաբար կ'ապրի։ Ուր որ գացինք, նախ Մուֆթիին, յետոյ հոգեւոր պետերուն այցելութիւնը փոխադարձեցինք։ Ամէնն ալ, ըսին որ գոհ են զանազան տարրերու մէջ տիրող համերաշխութենէն։ Այս մասին ո՛չ մէկէն բողոք մը չլսեցինք։ Միայն Աֆիոն-Գարահիսարի Հայերու գաղթին մէջ մարդ մը, իրենց փաղցին մէջ ջուրի ճամբաներու չինուելուն մասին խօսելու առթիւ ըսաւ։ «Մեր քրիստոնեայ ըլլալուն համար չշինեցին»։ Ասոր վրայ անմիջապէս քննութիւն կատարեցինք։ Հասկցանք որ, ջուրի ճամբուն չշինուելուն միակ պատճառը՝ քաղաքապետութեան անկարողութիւնն է։ Իսկոյն, երկրին հաստիքները իբր փոխարէն ցոյց տալով՝ ազդարարեցինք քաղաքապետութեան որ, փոխառութիւն մը ընէ և այս գործը կարգադրէ, ան ալ յարմար տեսաւ։ Բողոքարկուն, համոզուած գիտցաւ մը՝ խոստովանելով Քաղաքապետութեան անհրաժեշտութիւնը՝ ըսաւ որ, չկրնալ կրնայ այս գործը գլուխ հանել։ Ուստի պատուիրեցինք որ, փոխառութեան իբր փոխարէն, ընծայած հերքին տուրքի (ափուսալիէ րէսմի) վերահաստատումը, իսկ եթէ ասիկա կարելի չըլլայ ուրիշ ճար մը խորհելու մասին պէտք եղածը անկողմնակալօրէն կուսակալութեան։ Ամէն տեղ, մանաւանդ Էնիգարէի մէջ, միութեան և համերաշխութեան հաւաքներու կը կազմակերպեն զանազան տարրերու դէմքերուն վրայ։ Թէ՛ Մուֆթին և թէ՛ հոգեւոր պետերը կրկին ու կրկին ապահովցուցին որ, կուսակալութեան մէջ ամէն անհատ եղբայրաբար կ'ապրի, և երկու գրացիներու մէջ ազգակներու առանձին անկեղծութիւնը և բարի վարմունք կայ։ Տարրերու միութեան օրինակ մը ըլլալու համար, ձեզի պատմեմ դէպք մը, որ ինծի շատ ազդեց։ Կարաբունի մէջ, մեր մեկնումին առթին նորէն գտնուող ծեր Յոյն կրօնաւոր մը, դուս Թիւրքի մը չլսուելով ըսաւ․ «արդէն մանաւանդ անկողինին մէջ ըլլալուն համար կրցած չէի ձեզ դիմաւորելու գալ, բայց ձեզի յաւզարել չըլլալու համար այրեալ հանգիստ չեղաւ ու եկայ»։ Եւ մեզ ամենամտերմական ձեռք՝ գիւ վերջին աստիճան յուզեց։ Մենք ալ, Իսմայիլ Պէյքիմանեանը, ամենքս ալ միացած ենք. ասկէ ետքն ալ, մեր ծերուկի Թագաւորին ու իր նախարարներուն բաղձանքին համեմատ, միշտ եղբայրաբար ապրելու խոստումը, իբր ազգերիթ նուէր, ձեզի կը մատուցանեմ»։ Այս խօսքերէն ետք, ձեռքերը վերցնելով աղօթք ըրաւ։ Կրօնաւորին շարժուձեւերու մէջի անկեղծութիւնը այն աստիճան խանդավառ էր և յուզուած որ, ասիկա երբեք չպիտի մոռնամ։

Խմբ. — Բուլղարի հետ բաղդատելով Անատօլուն ինչպէս գտաք։

Նախ. — Բուլղարի հետ բաղդատելով Անատօլուն, չինութեան տեսակէ կարօտ վիճակի մէջ կը գտնուի։ Բայց սա ալ ըսեմ որ, այս տարածութեան երկիրը շատ յարմար է յառաջդիմութեան։ Դժբախտաբար այս ծանրակշիռ տեղերը, մինչեւ Սահմանադրութիւն, անխնամ ու ամայի մնացած է, ասոր համար կարծես թէ մահացած է և քաղաքակրթութեան լոյսէն զրկուած։ Գոնիայի կուսակալութեան մէջ քարի տեղ ամփոփ չինուած, կղմինտրի տեղ ցեխով ծածկուած տուները շատ պէտք ունեցող մը կը պարզեն։ Գոնիային 8-10 քիլոմեթր հեռու գտնուող Միլլէէ Թբանիէին գիծ մը երկարել որոշուած է քաղաքապետութիւնը։ Միլլէի քարը շատ առատ է։ Երբ այդ տեղէն քար բերուի, շատ յուսալի է որ, այսօր քառակուսի մեթրը տասներէ ղրուշի ծախուող քարին գինը՝ ութը ղրուշի իջնէ։ Ժողովուրդը չինութեան և կարգ ու կանոնի իբրավէս հակամէտ ըլլալով, քիչ ժամանակի մէջ ապիկանները տեղ քար պիտի գործածուի։ Շատ հաստատուն յոյսով մը կրնամ ապահովցնել որ այս տեղերը քանի մը տարուան մէջ քաղաքակիրթ երկիրներու ձեւը պիտի առնէ։ Լաւ հանդիպում մը ըլլալով, Գոնիայի հանրակառքը սկսած էր երթեւեկել Պոլսամի առաջին օրը, ուր հասած էինք, այս յառաջդիմութեան արդիւնքը դիտեցինք չափազանց ուրախ եղանք։ Աֆիոն Գարահիսար, Քէօթահիա, Էսկիշէհիր միւս քաղաքներու հետ բաղդատելով աւելի չէն վիճակ մը ունին։ Վաճառականութիւնը, երկրագործութիւնը, արուեստները իրապէս զարգացած են այս տեղերու մէջ։

Խմբ. — Ժողովուրդը սահմանադրութեան արդիւնքները ըմբռնելով գո՞հ է, սահմանադրութեան և ընտանեկութեան մէջ ի՞նչ տարբերութիւն կը տեսնէ։

Նախ. — Ի՞նչ կ'ըսեմ... տեղերուս կրկնել աւելորդ։ Սահմանադրութեան առաջին թագաւորին, Սուլթան Մէհմէտ Ե. ի համար ամէն ոք կ'աղօթէ, և կառավարութեան համար, ամէն ժողովուրդ, առանց ցեղի ու կրօնի խտրութեան, շնորհակալ և երախտապարտ է։ Մեր համբերութենէն առաջ, կը լսուէր ու կը կարծուէր թէ՝ Անատօլուի մէջ սահմանադրութիւնը դեռ ամբողջովին չհասկցուեցաւ, ինչ սխալ կարծիք...։ Ձեզի կրնամ ապահովցնել որ, ո՛չ թէ քաղաքացիները այլ գիւղացիները անգամ, շատ լաւ զգացած են իրենց վրայէն բռնապետութեան մղձաւանջին վերնալը։ Նոյնիսկ կը յաջողին իրենց այս զգացումները իրենց պարզ լեզուներով, անմեղ և պարկեշտ ձեւով բացատրել։ Մարդ ո՛րչափ անանկ անոնց մօտենայ լեզուներուն անկեղծութիւնը և իրենց բացատրելու կերպին պարզութիւնը, ա՛յնչափ իրաւացի պարծանքի զգացում մը կ'ունենայ։ Ձեզի օրինակ մը յիշեմ։

Զուրա գիւղը իջանք՝ ջուրի ճամբու չինութիւնը անցնելու համար։ Հոն՝ գիւղացիի մը հարցուցի․ «կառավարական պաշտօնեաները ձեզի հետ ի՞նչպէս կը վարուին»։ «Աստուած թո՛ղ ամէնքին վարձատրութիւնը տայ, պատասխանեց, դեռ անցեալ օր, գործի մը համար Գոնիա գացած էի․ երբ կուսակալութեան չէնքը երթալով՝ անոր որ գործս կէս ժամի մէջ կարգադրուեցաւ, ձեռքերս բանալով թագաւորին, ազգին աղօթք ըրի։ Հին րէժիմի ատեն՝ այս գործը մէկ ամբողջ ամսուան մէջ չէր լմննար։ Բայց հիմա սահմանադրութիւն կայ, ազատութիւն կայ, եթէ կառավարութիւնը մեր գործերը չտեսնէ, շատ տեղեր անոնք բողոքելու, փառք Աստուծոյ, կառավարութիւնը ազգին ձեռքը անցաւ։ Ասկէ ետքը մեր իրաւունքները չկորսնցնելու ճամբան կը գտնենք»։

Խմբ. — Ձեր համբերութիւնը ի՞նչ ազդեցութիւն գործեց ժողովուրդին վրայ, դուք ալ ի՞նչ զգացումներով վերադարձաք։

Նախ. — Մենք արծննցինք անոր նկատել որ, մեր համբերութիւնը՝ ժողովուրդին վրայ անմոռանալի ազդեցութիւն մը ըրաւ։ Հինգ օր շարունակ, — նոյն իսկ գիշերներն ալ վագոնի մէջ անցնելու պայմանով — համբերեցինք։ Գիւղացիները մէկ ու կէս ժամ հեռաւորութենէն անցնելով իրենց գիւղերէն մինչեւ կայարանները գալու նեղութիւնէն չէին փախչիր, ձեռքերնին լապտերներ, պօշանկներ առած «կեցցէ մեր Թագաւորը, կեցցէ մեր Ազգը, կեցցէ մեր նախարարները» պոռալով կը ծափահարէին ու մեզի ընդունելու համար ժամանակ չէին ճգեր։ Արդէն մենք ալ, մեր այս յարգելի հայրենակիցները անհանգիստ ընելու հաճոյքէն համար մեր քունն ու հանգիստը զոհելու հաճոյք առած պատրաստ էինք։ Մեր անցքին վրայ անհանգստած նոյն վիճակը և ազդեցութիւնը անմոռանալի մեր իբրեւ տեղերուն մէջ ալ։

Ճամբան պէտք ալ և այլ տեղեր ճառ խօսած ատեն, ժողովուրդին շատերուն ուրախութիւնն ու յուզումէն լալը կը տեսնէինք և իրենց ճառերէն ետք կը լսէինք որ «ինչպէս լաւ, ամէնքնիս ալ պիտի աշխատինք, յառաջ պիտի երթանք, երջանիկ պիտի ըլլանք» կ'ըսէին։ Ժողովուրդին այս վիճակը համոզեց զիս որ, մեր երկրին ապագան խիստ փայլուն է։ Անոր մեծ հանճարներու համոզեցանք որ, չկրցանք մեր զարմանքը զսպել։ Ձեզի քանի մը օրինակ յիշեմ․ օրինակի համար, Զաւմրա գիւղին մէջ, մեզ դիմաւորելու համար եկած դպրոցի աշակերտներու մէջ Մէյրո Ալի անուն տղայ մը կար, որ տարիէ մը ի վեր դպրոց կ'երթայ եղեր։ Այս տղան կրցաւ Նէճիպ Կազերաի մէկ ոտանաւորը անխափան կարդալ, նոյնիսկ յաջողեցաւ տողերէն և պարերէն բառերն ալ ճիշդ արտասանել․ ասկէ զատ, չորս գործողութեան վրայ արտած խնդիր մը չափազանց արագութեամբ լուծեց։

Իսմայլը գիւղին մէջ, դուս եօթը տարեկան, փոքրիկ Սարըգ օղ և Սալվարօղ անուն մը անանկով դիմաւորողներու մէջ, զինք հարցափորձեցինք։ Մանկուկին ցոյց տուած խելացութեան վրայ զարմացանք։ Ըսաւ որ, Իպթի-տայի (Նախնական) դպրոցը աւարտած է։

Զամբեցինք որ այդ հանճարը հոն մնա՞յ, ուստի հարցուցինք որ, այդ տղան ինչ կրնայ ըլլալ հոն, «ի՞նչ պիտի ըլլայ, չօպանի համար» պատասխանեցին։ Ասոր վրայ անմիջապէս, մեր մէջ փոքրիկ հանգանակութիւն մը բանալով յարմար դատեցինք Պօլսի իտատիէ (Երկրորդական) վարժարաններէն մէկուն րիւշտիէ (Նախակրթարան) բաժնին մէջ դնելով, և տղուն որբ ըլլալուն համար, խնդրեցինք գիւղացիներէն որ, անոր մօրը հոգածութիւնը տանին։ Այն տեղէն մեկնելով՝ Պոլսայարնի կայարանը հասաւ չողեկառքը, լսեցինք որ, ժողովուրդին մէջ 8—10 դպրոցական աշակերտներ աղօթութեան երգը կ'երգէին, ինչ որ խիստ բնական գտանք։ Բայց քիչ մը ետք, երբ չողեկառքը կանգ առաւ և լսեցինք որ, այս տղաները խիստ քաղցր Փրանսական չեշտերով ու ճշտօրէն՝ քաղցրալուր ձայնով մը «Մարսէյեզ»ը կ'երգեն, բոլորովին զարմացանք։

Նախարարը ասիկա ըսելու ատեն, խմբագիրը զարմացած՝ երբ «կ'լու ե՞մ» բացագանչեց, Նախարարը անուշ ժպիտով մը ըսաւ․ «Անատօլուն շատ յուսալից է, վստահ եղէք որ աննկարագրելի հրաշալիքներու հանդիպեցանք»։ Այս խորհրդածութիւններէն ետք իր խօսքերը շարունակեց հետեւեալ կերպով։

Մասնեցինք որ այս երգը կրնայ գայ սորվուած ըլլալ Թաղմակի մէջ, ուստի աշակերտներէն մէկը քովերնիս կանչեցինք։ Հարցուցինք որ գիտէ՞ իր կանչած երգին իմաստը։ Տղան համարձակօրէն պատասխանեց․ «Գիտեմ էֆէնտիմ»։ Եւ սկսաւ ամէն տունին զատ զատ իմաստը բացել։ Անանկ կը թուի ինծի որ, մեր հոգերը թրթռացնող իր անմեղունակ ձայնովը բացած իր սա խօսքերը կը լսեմ նորէն։ Տղեկը երգին մէկ մասին իմաստը բանալու ատեն՝ սապէս խօսեցաւ․ «Ամէնով, մեր վրայ սեւ ամպեր կային, հիմա անոնց տեղ փայլուն և կենսատու արեւ մը կը փայլի»։ Հարցուցինք որ ի՞նչ են սեւ ամպերը։ Երեսը կարմրեցաւ, ձեռքը վերցուց — եթէ անգամ մըն ալ գայ, զայն կը ճզմենք — խօսքը հասկցնել ուզող պարզ և քաղցր կերպով մը․ «Իս-թիպտա՛տ» (բռնապետութիւն) ըսաւ։

Մենք նորէն հարցուցինք, «Արեւ ըսելով ի՞նչ բան հասկնալ կ'ուզես»։ Տղան ժպտալին սա պատասխանը տուաւ․

«Սահմանադրութի՛ւն... Ազատութի՛ւն...» և խօսքերը չկրնալով բռնել «կեցցէ՛ Ազատութիւն» պոռաց։

Այս պատասխաններուն վրայ, ամէնքնիս ալ ուրախութենէ արտասուեցինք։ Ճամբան պէտք ա՛յն աստիճան ալ յուզուեցաւ որ, դրամնէն իր ժամացոյցը հանելով տղուն նուիրեց և խնդրեց անկէ որ, ասիկա ընդունի իբր յիշատակ։ Այս գիւղացի տղաներուն փրանսերէն լեզուն ո՛ւր տեղէն սորված ըլլալուն համար հետաքրքրուեցանք և քննութիւն կատարեցինք։ Մեր գտած հետեւութիւնը՝ ուրախացուց մեզ։ Շէմսէտտին պէյ անունով ջանասէր և հայրենասէր աղայ մը, նախնական դպրոցը աւարտող այս էֆէնտիներուն համար իր տունին մէջ սենեակը յատկացուցեր և այդ սենեակը դպրոցի վերածեր է։ Անոնց այլազան գիտութիւններ և փրանսերէն դաս տուեր է, զանոնք այս վիճակին հասցուցեր է։ Աստուած թո՛ղ հաճի անոր, և մեր երկրին մէջ այսպէս հայրենասէր երիտասարդներ թո՛ղ շատնան։

Անհատապէս մեր բոլոր անցած տեղերուն մէջ, ամէնքէս յառաջդիմութեան արդիւնքներուն հանդիպեցանք։ Շնորհակալութիւնով սա ալ աւելցնեմ որ, Անատօլուի մէջ գտնուող Օսմ․ Թօփթէքի կեդրոնները և մասնաճիւղերը, յառաջդիմութեան և կրթութեան համար իրենց ջանքերը չեն խնայեր։ Ամէն կողմ գիւղական դասախօսութիւններ հաստատած է։ Կարդալ գրել չգիտցող ժողովուրդին, ձրի դաս կուտան, առանց անոնց գործին արգելք ըլլալու։ Ճառախօսութիւններ կ'ընեն, ասկէ զատ, մէկ մէկ նախնական դպրոց իրենց պաշտպանութեան տակ առնելով՝ օրինակելի դպրոցի մը վիճակին կը վերածեն զայն, ու ճշմարիտ յաջողութեան և կատարելութեան կ'արժանացնեն։ Այս ձեռնարկներու մէջ չյաջողող գիւղացիներէն ալ յատուկ և ապահովութիւն առնենք՝ զինենք քաջալերելով։ Բացարձակապէս յուսալի է որ այս ձեռնարկները շատ փայլուն և օգտակար արդիւնքներ յառաջ պիտի բերեն։

Խմբ. — Ձեր պտըտած տեղերուն համար, չունիք ի՞նչ անօրէնութիւններ պիտի ընէք։

Նախ. — Շատ դիմումներ եղան։ Ամէնքն ալ զատ զատ քննելով պէտք եղածը պիտի ընենք։ Ասոնց մասին կը խոստանամ ձեր լրագրին ընդարձակ տեղեկութիւններ տալ հետզհետէ։

Ծալէաթ պէյ այս խօսքերը ըսելէ ետք, յայտարարած է Նէճիպ Կազերաի խմբագրին, իր շնորհակալութիւնը յայտնել՝ բոլոր իրենց այցելած տեղերուն պաշտօնեաներուն, հոգեւոր պետերուն, աղաներուն, էշրաֆներուն, Օսմ․ քոմիթէին անդամներուն և բոլոր ժողովուրդին, իրեն տեսած յարգանքին ու ազնուութեան համար։

Քաղաքական

ՍՊԱՆԻԱ

Հակառակ կառավարութեան ձեռք առած խիստ միջոցներուն՝ Ֆէրրէրի հայրենիքին մէջ ալ բողոքները կը պայթին ընդդէմ անոր վրայ գործադրուած մահուան պատիժին։ Թերթերը՝ պահպանողական և հանրապետական թերթերը բնական է՝ կը խօսին որքան որ կը ներէ տիրող օրէնքը։ Անոնց յայտնած կարծիքներուն ամփոփումը տալէ առաջ՝ կը ներկայացնենք, սակայն, Պարհըլլարանի բացման նիստին համառօտ նկարագրութիւնը, որուն մէջ ընդդիմադիր սարքը յաջողած է, ինչպէս պիտի տեսնուի, իր ձայնը լսելի ընել եւ մաքրել, գէթ այդ չափով, Սպանիոյ կրած անպատուութիւնը յաչս քաղաքակիրթ աշխարհի։

Ծարաթ, հոկտ. 16, վարչապետ Պ. Մաուրա և միւս նախարարները իրենց հանդիսաւոր համազգեստները հագած՝ գացին Ծերակոյտին և Պարհըլլարանին մէջ կարդալ Թագաժառանգ վերաբացման հրովարտակը։ Բոլոր երեսփոխանները ներկայ էին և ժողովուրդին յատկացուած տեղը ամբողջովին գրաւուած էր։ Դուրսը բազմութիւնը խռնուած կ'սպասէր։

Հրովարտակը դեռ չկարդացուած՝ հանրապետական երեսփոխան մը խօսք կ'ուզէ և անցքին աղմուկ կը պատճառէ։ Հանրապետականներուն բողոքները կը խլեն վարչապետին ձայնը։ Ի վախարէն՝ կառավարականները կը բողոքեն անոնց դէմ և արդէն իսկ սրահին մէջտեղը կը նետուին և կը սկսին ձեռքերով կռուիլ։ Բարապանները կը միջամտեն և Պ. Մաուրա կը յաջողի հրովարտակը կարդալ։ Մեծամասնութիւնը ջերմօրէն կը ծափէ։

Ներքին գործոց նախարարի խարնդակամը, ոտքի ելած, կը պոռայ․ «Կեցցէ՛ Թագաւորը․ Կեցցէ՛ Սպանիա․ Կեցցէ՛ բանակը։» Մեծամասնութիւնը խմբովին կ'ընկերանայ անոր ձայնին, մինչ հանրապետականները կը պոռան․ «Մարդասպանն'ը... Կեցցէ՛ հայրենիք, կեցցէ՛ հանրապետութիւն» և Գատալոնները՝ «Կեցցէ՛ Ժէմ Գ․, կեցցէ՛ Սպանիա։»

Պ. Սերիլէրա, հանրապետական, կ'աղաղակէ․ «Այո՛, կեցցէ՛ Սպանիա, բայց պատիւով Սպանիան։»

Վերջապէս, անդորրութիւնը վերահաստատուելով կարելի կ'ըլլայ Նախագահի ընտրութեան ձեռնարկել։ Պ․ Տամիօ 225 քուէից միաձայնութեամբ կ'ընտրուի այդ պաշտօնին և նախագահական աթոռը բարձրանալով կը խօսի ճառ մը որուն մէջ կը յորդորէ երեսփոխաններուն իրենց հանդարտութիւնը պահել այն ծանրակշիռ վիճակառութեանց մէջ որոնք պիտի յաջորդեն։ Կը գովաբանէ Մէլիլյայի մէջ կռուող զօրքերը, ինչպէս նաեւ զօրավար Մարինան։ Այս խօսքին վրայ, քանի մը հանրապետականներ ուժգնութեամբ կը բողոքեն՝ գոչելով․

— Այո՛, գովաբանեցէք զօրքերը, բայց ո՛չ զօրավար Մարինան։

Պահպանողականներու բողոքին մէջտեղ՝ Նախագահը կը վերջացնէ խօսքը, յորդորելով յարգել Րիֆի արշաւանքին մէջ մեռնող սպաներու և զինուորներու յիշատակին։

ԳՐԱԿԱՆ ԹԵՐԹՕՆ (48)

ՏՕԹՕՌՕՅԷՎՍԿԻ

ՄԵՌԵԼՆԵՐՈՒ ՏԱՆ
ՅԻՇԱՏԱԿՆԵՐԸ

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

Ե.

ԱՄԱՌՈՒԱՆ ԵՂԱՆԱԿԸ

Անշուշտ, այս տեսակ կեանք մը անպատեհութիւններէ զերծ չէ մինչ․ յաճախ թափառաշրջիկը օրերով առանց ուտելիքի կը մնայ, պարտադրուած ըլլալով թաքչելու և ամէնէն ծածկուելու․ և այն ատեն կը սկսուէր գողնալ, աւարի սար և յաճախ ալ սպանել։ Թափառաշրջիկի մը մէջ շատ անգամ ա-... մը՝ և գրեթէ միշտ գող մը կար, բայց գող թէ մարդասպան, անոնց մին կամ միւսը կ'ըլլայ ո՛չ թէ կոչումով այլ պէտքէ մղուած։

Ամառուան եղանակին թափառաշրջիկներ օգտուելով իրենց ազատութենէն՝ լակին մէջ խումբ խումբ մեն կուգային, սպասելով որ գան զիրենք վարին։ Բայց, իրենցմէ շատերը ճոչասըլլանը կը մնային։ Հո՞ն էր որ կը միճարանէքին պատժարանի վերաբերեալ խմբիխներու մասին. հոն կը մեկնոտանէին յաճախ աննկարեն զրոյցները, որոնք իրենց ուշադրութիւնը կը գրաւէին։ Այսպէս, օր մը, լուր տարածուեցաւ թէ մեր պաշտօնակալը պիտի ճամբուէր։ Թիապարտները ալոզ պէտ զինուորուած են։ Գիտեն որ լուրը սուտ է, թէ Պիլառօֆ անուն ատախօս թիապարտ մը մէջտեղ նետած է, այսուհետեւ ամէնքն ալ այդ սուտին կը փաթթուին և անոր մասին վիճաբանելով կը զբօսնուն։

— Բայց ո՞վ պիտի ճամբէ զինքը, կը գոչէ թիապարտ մը, ամենը հաստատ կեցած է, տեղէն չերթար։

— Կը կարծես որ իր մեծերը, եթէ ուզեն, չե՞ն կրնար ճամբել, կը պատասխանէ ուրիշ մը, մեծաւոր հակառակ բառեն ըլլալու համար։

— Գայլերը իրար չեն ուտեր, կը նկատէ ծեր թիապարտ մը։

— Կը կարծես որ իր մեծերը պիտի գան քու կարծիքդ հարցնեն զինքը ճամբելու համար, կ'ըսէ չորրորդ մը՝ անհոգ դէմքով։

— Եւ ինչո՞ւ չհարցնեն, կը պատասխանէ երկրորդը կատաղած։ Եթէ ձեզի հարցափորձեն ըսէք ձեր սրտին մէջ ինչ որ կայ։ Բայց եւ այսպէս նա որ չպիտի ըսէք։ Հոս կը պոռաք կը կռուիչէք, բայց երբ տեղը գայ խօսելու չէք համարձակիր։

— Բայց շատ բնական է, քանի որ թիապարտանի մէջ կը գտնուինք։

— Այսպէս, կը շարունակէ միւսը, վերջերս քիչ մը ալիւր մնացած էր, քերթուկներ... կ'ուզէին ասիկա ծախել։ Լաւ, ինչ, երբոր իրենց տարին, ձեռքը ապրանքին զրաւ։ Ասիկա արդարութիւն է, այո՛ կամ ո՛չ։

— Բայց որմէ՞ կը տրտնջաս։

— Որմէ՞․ բայց քննիչէն որ պիտի գայ։

— Ի՞նչ քննիչ։

— Ճշմարիտ է, ընկերներ, քննիչ մը պիտի գայ մօտերս, հաստատեց երիտասարդ թիապարտ մը, նախկին հայթայթիչ մը որ Լավալիէրի դքսուհին կամ այդ կարգի քանի մը վէպեր կարդացած էր։

— Այո՛, ընկերներ, ուխտեցէք, զօրավար մըն է որ Ս․ Պետերսպուրկէն կուգայ բոլոր Սիպերիոյ մէջ քննութիւն մը կատարելու համար։ Այս է ճշմարտութիւնը։ Հրամանատարին ծառայէն իմացայ։

Լուրը արտաքոյ կարգի յուզում մը առաջ բերաւ։ Տեղեկատուներն հարցումներ ուղղեցին․ ո՞վ է այդ քննիչը, ինչ զօրավար է, ինչ աստիճան ունի, ևն․։

Ընդհանրապէս թիապարտները հաճոյք կը զգային աստիճանի, պետերու, և իշխանութեան զանազան ներկայացուցիչներու փոխադարձ յարաբերութեանց մասին վիճաբանիլ․ ասիկա խօսակցութեան ամէնէն լուրջ և վայելուչ նիւթը կը համարուէր։

— Գիտէ՞ք ինչու մեր պաշտօնակալը պաշտօնանկ պիտի ըլլայ, նկատեց Պիլառօֆ։

Ի՞նչ էր որ առաջին անգամ այդ լուրը մէջտեղ հանած էր։

— Ինչպէ՞ս կը կոչուի․ ըսաւ ծեր թիապարտը։

— Իրա՛ւ կը կոչուի, գինեպ տուած ուրիշ մը։ Անիկ դրամ դիզած է։ Վերջերս մեծ մասը տասնօրեակին ողջերմեր հետ պիտի ամուսնանար։

— Բայց չամուսնացաւ․ դուռը գոցեցին իրեն, քանզի շատ աղքատ էր։ Փեսայ մը չունի, ուստի չայմի ունեցածը կորսնցուցած է թուղթի մէջ, Ծէտքա պատմեց ինծի։

— Այո՛, այդ մարդը դրամ պահել չգիտեր, թէեւ շատ չէ։

— Դուն, Պիլառօֆ, ըսաւ նախկին հայթայթիչը, ապուշ մըն ես։ Կը կարծես որ պաշտօնակալը կրնա՞յ այսպիսի կարեւոր զօրավար մը կաշառել և թէ առանձին զօրավար մը Ս․ Պետերսպուրկէն մինչեւ հոս կուգայ յատկապէս պաշտօնակալին վրայ քննութիւն մը բանալու համար... խօսեցէք անմարեւ եղէք։

— Ի՞նչ ի՞նչ է եղեր, նկատեց մէկը, երբե՞ն ի վեր է որ զօրավարները կաշառք չեն ուտեր։

— Բայց ո՛չ այս զօրավարը նոյն իսկ եթէ կաշառք առնէ մեծ բան մը կ'առնէ։

— Բոլոր զօրավարներն ալ կաշառակեր են, նկատեց Պիլառօֆ համոզուած դէմքով մը։

— Կարելի է դուն իրենց դրամ կերցուցած ես, ըսաւ Պաքլուշին որ նոյն միջոցին ներս մտաւ։ Կեանքիդ մէջ արդէօք զօրավար մը տեսա՞ծ ես։

— Հարկաւ տեսած եմ։

— Սուտ խօսա՛ս։

— Դո՛ւն ես սուտխօսը։

— Եթէ զօրավար մը տեսած ես, անունը տո՛ւր, քանզի ամէնքն ալ կը ճանչնամ։

— Զօրավար Զիպէրթը տեսած եմ, պատասխանեց Պիլառօֆ առանց վարանումի։

— Օ՛ն, օ՛ն, հերիք շատախօսութիւն. քիչ մը լուրջ բաներու վրայ խօսինք...։ Տեսնենք ո՞վ է այդ քննիչը, հարցուց ծերունի Մարթինօֆ, նախկին հուսար մը։

— Ամէնքն ալ սուտ խօսքեր են, նկատեց ակերպիկ մը։

— Ո՛չ, սուտ չէ, միջամտեց Քուլիքօֆ որ մինչեւ այն ատեն լուռ մնացած էր։

Ցեղին ազնիւ լուրջ մարդ մըն էր, հաճելի դիմագծերով և հպարտ ձեւերով։ Արհեստով անասնավաճառ էր... քիչ մը և ձիեր խնամելով և ուրիշ ծախելով իր կեանքը կը շահէր։ Խելացի մարդ մըն էր որ շատ բան տեսած էր։

— Կատարեալ ճշմարտութիւն է, առաջ տարիու համղտար կերպով։ Անցած շաբաթուընէ ի վեր լուր ունիմ։ Զօրավար մը, և կարեւորներէն մէկը, քիչ առաջ պիտի գայ՝ ամբողջ Սիպերիոյ մէջ քննութիւն մը կատարելու համար։ Անշուշտ իրեն կաշառք պիտի կերցնեն, բայց ապահովաբար ո՛չ մեր պաշտօնակալը․ նոյնիսկ քիթը մտնելու չպիտի համարձակի։ Այո՛, բարեկամներ, զօրավար կայ և զօրավար ալ կայ․ ամէնքը իրարու չեն նմանիր... Ես ձեզի առաջուընէ կ'ըսեմ․ մեր պաշտօնակալը, ամէն պարագայի մէջ, իր պաշտօնը պիտի պահէ։ Ասիկա ապահով է։ Մեր լեզուն կապուած է, գալով պետերուն, իրար չեն մատներ։

(Շարունակելի)

Միրտվայսին մէջ, նոյնը կ'ընէ նախագահը՝ Զօր. Ազգարական։ Գ. Տինդ Մէրէլ, ռամկավարական, կը ծանուցանէ թէ յաջորդ նիստին պիտի հարցադրէ արտաքին գործոց և պատերազմ. նախարարները՝ կառավարութեան արտաքին և ներքին քաղաքականութեանը վրայ։ Դարձեալ, Գ. Բալլէթան կը ծանուցանէ թէ յանուն ազատական խմբակին՝ հարցապնդում պիտի ուղղէ Պարչէլոնայի դէպքերուն և Րիֆի արշաւանքին մասին։

Թաղապետական խորհուրդին նոյն օրուան նիստը նոյնքան յուզեալ եղած է։ Նախագահը մերժելով խօսք տալ ընկերվարականի մը՝ սաստիկ ժխոր մը սկսած է որուն մէջ կը լսուէին Ֆերրէրի անունը և զանազան նախատինքներ։ Ի վերջոյ, ընկերվարականները մեկնեցան սրահէն. քիչ յետոյ, հանրապետական խմբակին մէկ անդամն ալ անոնց հետ, և ըսելով թէ Ֆերրէրի մասին յայտնուած բողոքին կը ձայնակցի, ինքն ալ տուաւ քալեց իր և ուրիշ քաշելով միւս բոլոր հանրապետականները։

*** Ի նպաստ Ֆերրէրի կազմակերպուած համաշխարհային ցոյցերուն արձագանքը ցուցադրին ապստամբութիւն մը գործեց Մադրիտի մէջ։ Անհաւանական թէ ինչ ընդունելութիւն կ'ընեն սպանիական թերթերը այդ լուրերուն։

Լա Էբօքա, կառավարական օրկանը, կ'ըսէ թէ չի զարմանար անիշխանականներու յարուցած անկարգութիւններուն և հետևած նախատինքներուն համար, բայց կը ցաւի որ՝ իրողութիւնները չգիտնալնուն պատճառաւ՝ գիտնականներ և գրողներ իրենց անունները խառնած են անոնց անունին։ Կը հաւատայ թէ Ֆերրէրի հետապնդումը, դատավարութիւնը, դատապարտութիւնն ու մահվճռին գործադրութիւնը կատարուած են իրբև անձի մը վրայ որ հեղինակն է զինուորական ապստամբութեան՝ իր բոլոր ծանրացուցիչ պարագաներովը և հաստատուած համոզիչ փաստերու վրայ։ Ֆերրէրի վրայ գործադրուած օրէնքը՝ իր յանցանքին գործուելէն առաջ գոյութիւն ունէր և միակն էր իրեն համար գործադրելի։ Զայն քաղաքային դատարանի առջև քաշելն էր որ՝ օրէնքի դէմ բռնաբարում մը պիտի ըլլար։ «Ոչ մէկ քաղաքակիրթ երկիր — կ'աւելցնէ Լա Էբօքա — պիտի թոյլատրէր Ֆերրէրի ծանրակշռութեան գործը՝ առանց անձնապաշտութիւն կատարելու։ Անոնք որ կ'ըսեն թէ Սպանիա հին դարերու արժանի վիճակ մը, օրինագիրք մը և սովորութիւններ ունի՝ անդրադառնալու առանց կը խօսին։ Սպանիա ազնուութեան յարգանքին իրաւունք ունի։»

—Իմբարսիալ «Տօղնապալի մօղէնեը» վերնագրով կը բաղդէ սպանիական դիւանին ասպէսի կատարուած ցոյցերուն դէմ և կառավարութեան ուշադրութիւնը կը հրաւիրէ նրայ այդ տեսակ վիճակի մը ստեղծող քաղաքականութեան վրայ։ Բոլոր ազատական կուսակցութիւնները պարտական են կանչնել ազգը անկախութեան եղելքին վրայ, կ'ըսէ։ Ներկայ դէպքերուն բոլանդակ պատասխանատուութիւնը կը նետէ Մաուրայի դահլիճին վրայ, որ, կ'ըսէ, իր քմահաճոյքին համեմատ կառավարելով պատասխանատուութիւնն ունեցած է։ «Վայրկեանը հասած է, կը յայտարարէ վերջացնելով, որ Խորհրդարանն անհրաժեշտօրէն լսելի ընէ իր ձայնը։ Ազգին համերաշխութիւնը հասած է։ Արտասահմանի բողոքները կը յիշեցնեն թէ բոլոր երկիրները հասարակաց ժառանգութիւն մը ունին, ազատութեան և ամենավարութեան ժառանգութիւնը։»

— Էլ Բահս՝ հանրապետական օրկանը, դիտել կուտայ թէ արտասահմանի յուզումը հակառակութիւն կը կազմէ Սպանիոյ խաղաղութեան հետ, որ կը ծնի կամայականութենէ և անհաւասարութենէ։ Բողոքի շարժման յանցանքը կը նետէ կառավարութեան և կղերականներուն վրայ։ Կը ցաւի որ Սպանիոյ անունն է որ կը կրէ հետևանքները այդ յանցանքին։— Էլ Լիպերալ կը պահանջէ որ կառավարութիւնը Խորհրդարանին առջև հաշիւ տայ արձակուրդի միջոցին իր կատարած բոլոր գործերուն համար։ «Դեռ ժամանակ է, կ'ըսէ, առանձնականութեան ապագայ տալ և ցուցնել Եւրոպայի թէ արժանի ենք իր յարգանքին։»— Լը Հէրալտօ՝ ազատական՝ Բարիզի դէպքերէն խորապէս ախրած կը ցուցնէ ինքզինք. «Ինչ որ մեզ աւելի կը վշտացնէ, կ'ըսէ, այն է թէ օտար բարձրախոհ անձինք անարդարութեամբ կը խօսին Սպանիոյ մասին և զայն կը դատեն այնպիսի քաղաքակրթութեան մը վրայէն՝ որ չէ և երբեք պիտի չըլլայ իր ազգային քաղաքակրթութիւնը։»—Բօրէսբռնեսիոնի միթիթար պաշտօնաթերթականի առանձնութ կը պաշտպանէ բանալով թէ մարդ հրացանի բանիլ չեն տար ազատական, ազատ-խորհող կամ յեղափոխական ըլլալուն համար, այլ Ֆերրէրի նմանները միայն մահուամբ կը պատժեն, ինչպէս որ օրէնքը կը պատժէ....

ՖԻՆԼԱՆՏԱ

Բեդերսպուրկէն կը հեռագրեն թէ Զարին մէկ հրովարտակը ու այժմ զինուորական ծառայութենէ ազատ կը կացուցանէ Ֆինլանտայի ժողովուրդը, մինչև որ այդ մասին դատ օրէնք մը գծուի։ Ի փոխարէն, Ֆինլանտա պարտաւոր պիտի ըլլայ որոշ գումար մը վճարել՝ կայսրութեան բանակին ծախքերուն մասնակցելու համար։ Այս գումարը 1908-1909 տարւոյն համար տասը միլիոն ֆրանք որոշուած է։

Ներքին Լուրեր

ՕՍՄ. ՆԱՒԱՏՈՐՄԸ.— Սելանիկի նաւահանգիստը գտնուող օսմ. նաւատորմիղը առջի օր (Եչ.) Սելանիկէն ճամբայ ելեր է դէպի Կ. Պոլիս, հրամանատարութեամբ ծովակալ Կէմալ փաշայի։ Նաւատորմը մարզանքներ կատարելով իր ճամբան պիտի շարունակէ։

Սելանիկէն ճամբայ ելլելու ատեն պատերազմական շարք կազմելով ճամբայ ելեր է և չոխալանց ծովածածուկ եղեր է։

*** Ծովային նախարարութիւնը յառաջիկայ 1326 տարուան համար պատրաստած ծովային ելմտացոյցին բացառիկ բաժնին մէջ 22 միլիոն դրուշ սահմանած է իւրաքանչիւրը 17 հազարէն 17500 թոնօ տարողութեամբ երեք առաջնակարգ զրահաւորներու, բանակամուղային յածանաւերու և մէկ հրամանատարի նաւի գնման համար։ Երթէ ազգային ժողովը այս գումարը ընդունի, օսմ. նաւատորմը նշանակելի ատրճանակ պիտի զօրանայ և բաւական կարևոր դիրք մը պիտի գրաւէ Եւրոպական նաւատորմերու մէջ։

*** Օսմ. նաւատորմը կատարելագործելու վիճակի մը հասցնելու համար անգլիացի մը պատրաստուելու պաշտօնով մասնախումբ մը պիտի կազմուի, Նախարարաց Խորհուրդին որոշմամբ։ Այս մասնախումբին պիտի նախագահէ Սայիտ փաշա։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԸ որ ինչպէս գրած էինք, արձակուրդով Անգլիա պիտի երթայ, առջի օր Բ. Դուռն երթալով Եպարքոսին և Արտաքին գործոց նախարարին այցելեց և հրաժեշտ առաւ։ Դեսպանը վաղը պիտի մեկնի և իր բացակայութիւնը երկու ամիս պիտի տևէ։

ԲԱՂԱՔԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՓՈԽԱՌՈՒԹԻՒՆԸ.—Ֆրանքֆուրթեր Զայթունկ կը գրէ թէ քաղաքապետութեան փոխառութիւնը Լոնտրա, Պրիւքսէլ և Ջաւենիա հրապարակ պիտի հանուի։ Նոյն փոխառութեան Սելանիկի Պանքային պաշտօնակից մէկ հիմնադրողին մասնակից են նաև Բարիզի, Հոլանտայի և Սօճիէթէ Ժէնէրալ պանքաները։

ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ.— Ներքին գործոց և Եւմտական նախարարները՝ Թոյէսթ և Ճավիտ պէյ, շատ գոհ մնալով Անատոլուի մէջ իրենց կատարած ուղևորութենէն, որոշեցին Գուրպան Պայրամին տօնին ատեն ալ պտոյտ մը կատարել, այս անգամ երթալով Սուրիա և Հալէպ, Թերևս նաև Իզմիր և Արքիպեղագոսի մէկ քանի կղզիները։

ՆՈՐ ՕՐԻՆԱԳԻԾԵՐ.— Եպարքոսին կողմէ պատկանեալ պաշտօնարաններուն ծանուցուեցաւ որ նահանգներու վարչութեան, թաղապետութեան, ժողովրդային ժողովներու և ուսուցման օրէնքները շուտով պատրաստելով յանձնուին Պետական Խորհուրդին, որպէս զի Մէջլիսականան ժողովի բացման առաջին օրերուն հասնին։

ԳԱՀԱԶՐՈՒԿ ՇԱՀԸ ԹՈՒՐՔԻՈՅ ՄԷՋ.—Կ'ըսուի թէ Պարսկաստանի գահազուրկ Շահը Օտեսայէն մնաւ գոհ չէ և կը փափաքի Թուրքիա գալ։ Պարսիկ ազատականները շատ յուզուած են նախորդ Շահին Ռուսիոյ մէջ պատսպարուած ըլլալէն և իրենց յուզումը չեն ծածկեր։ Այս պատճառաւ Ռուսիա ևս մտքը դրած է պահելնեց Շահը Թուրքիա ղրկել։

ՆՈՐՄԱՆ ՕՐԷՆՔԸ.— Ցուլիս 10էն առաջի յանցաւորներուն համար գործադրուած ներման օրէնքը, Պետական Խորհուրդին որոշմամբ, վերաքննութիւն պիտի ունենայ նաև յանցաւոր պաշտօնեաներու ալ։

ԴԱՐԱՏԱԴԻ մէջ պատահած շփոթութիւններուն պատճառաւ Դարատադի պահեստի զօրաց հրամանատարներէն Մ. Նիքոլա և քեռորդին՝ Սրոյն, փախչելով օսմ. հողը ապաստաներ են։

ՀԵՌԱՁԱՅՆԻ ՆՈՒԱԶՈՒՐԴ.— Հեռաձայնի արտօնութիւնը որոշուած էր նուազուրդի դրութեամբ տալ ամէնէն նպաստաւոր պայմաններ առաջարկող անձին։ Այդ նուազուրդի գործողութիւնը առջի օր սկսաւ և շատ մը անձեր և օտար դրամատէրներ մասնակցեցան նուազուրդին։

ՀԱՆՐԱՅԻՆ Պարտուց վարչութիւնը 1908 Մարտ 14էն 1909 Մարտ 14 հաշուեցոյց մը հրատարակեց որմէ կ'երևի թէ նոյն ժամանակամիջոցին մէջ 4,191,689 լիրա հասոյթ գոյացեր է և նախորդ տարուան նայելով 272,687 լիրա, այսինքն մօտաւորապէս 7% հասոյթի աւելցութիւն մը կ'երևի։ Ընդհ. հասոյթէն 918,438 լիրան 3 % յաւելուածական մաքսատուրքէն գոյացած է։ Իսկ 70,653 լիրայի, այսինքն համեմատաբար 3 % նուազութիւն մը կ'երևի այն հասոյթներուն մէջ որոնց մատակարարութիւնը ուղղակի Հանրային Պարտուց վարչութեան կը պատկանի։

ՃԱՎԻՏ ՓԱՇԱ.— Թանին կ'իմանայ թէ Միթրովիցայի հրամանատար Ճավիտ փաշա՝ Իշքիպրի, և Ճայիր փաշա ալ՝ Միթրովիցայի հրամանատար կարգուած են։

ՌՈՒՄԷԼԻԻ ՌԱԶՄԱՓՈՐՁԸ.— Թանին կը գրէ թէ Բ. և Գ. զօրաբանակներու կողմէ Էտիրնէյի և Սելանիկի կողմերը կատարուելիք ռազմափորձերը որևէ քաղաքական նշանակութիւն չունին, հակառակ ինչ ինչ թերթերու գրածներուն։ Բացի Կոլչ փաշայէն, Մահմուտ Շէվքէթ փաշա ալ ներկայ պիտի գտնուի այս ռազմափորձերուն։ Իսկ Սուլթանին ալ այս առթիւ Էտիրնէ երթալը անհիմն է։

ՍԻՒԼԷՅՄԱՆԻԷՅԷՆ երկուշաբթի օրուան թուականով կը հեռագրեն թէ որևէ տեղի ընդհարում մը տեղի ունեցաւ օսմ. զօրաց և Պարսկան ցեղապետին մարդոց միջև։ Ցեղապետ չէյխը 400 մարդ կորսնցնելէ յետոյ՝ չճանչցուելու համար մօրուքն ածիլելով յաջողեցաւ փախչիլ։ Իր հետևորդները, իրենց չէյխին պարտութիւնը տեսնելով, օսմ. զօրաց ձեռքը չիյնալու համար, իրենց տուներն ու ամբարանոցներն այրելէ և սահմանագլուխէն Պարսկաստան անցան։

ՖՕՆ ՏԷՐ ԿՕԼՑ ՓԱՇԱ առջի առտուն Պոլիս ժամանեց և Սիրքէճիի կայարանին մէջ ընդունուեցաւ Մահմուտ Շէվքէթ, Սամի, Խալիլ, Բէրթէվ և Տիթմերթ փաշաներու կողմէ։ Հետևեալ օրը գումարտակ մը նուագախումբով զինուորական պատիւներ ընծայեց գերման զօրավարին, որ աչքէ անցնելով գումարտակին զօրքերը, շնորհակալեց զանոնք։ Կոլչ փաշա Թօգաթլեան պանդոկը իջեւանեցաւ։

ՍՈՒԼԹԱՆԻՆ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ.— Կայս. պալատին Ա. քարտուղար Խալիլ Զիյա պէյ Իզմիրի կառավարիչին պաշտօնապէս յայտարարեց թէ Սուլթանը այս օրերս նոյն քաղաքը պիտի այցելէ։ Այս լուրը Իզմիրի մէջ բաւական խանդավառութիւն յառաջ բերաւ։ Իզմիրի քաղաքապետութեան նախագահը հեռագիր մը ուղղելով կայս. պալատ, քաղաքին բնակչութեան կողմէ շնորհակալութիւն և երախտագիտութիւն յայտնեց այս բարեհաճութեան համար։ Էնթիշէնիցի դայմագամը, ինչպէս նաև Գոնիայի և Էնկիւրիի կուսակալները Իզմիր պիտի գտնուին կայս. այցելութեան օրը։ Իզմիրի զինուորական հրամանատարը Հէքէքի մէջ պիտի դիմաւորէ Սուլթանը։

ԾԱՆՐ ԴԷՊՔ ԳԱՆԻԹԷՐԱՅԻ ՄԷՋ.— Գանիթէրայի (Հալէպ) քաղաքապետ Մէհմէտ Խալիլ էֆ. կը հեռագրէ թէ ամբոխը Պայրամի առաջին օրը խուժեր է կառավարիչ Մէհմէտ Ծաքիր պէյի տան վրայ, և վայրագօրէն ծեծելով Ծաքիր պէյը, վիրաւորեր է զանիկա։ Քաղաքապետը կ'ըսէ թէ այս դէպքին հեղինակներն են բանակաւորութեան կուսակիցները, որոնք հակառակութիւն կը սնուցին կառավարիչին դէմ, և պատրուակ մը գտնելով այս փորձանքը բերին անոր գլխուն։ Կառավարիչը Պայրամի տօնին նամազէն ետք, գացեր է տուն և սկսեր է ֆոնոկրաֆ զարնել տալ։ Ամբոխն ասոր վրայ դրդուեր է, յայտարարելով որ կառավարիչին ըրածն անկրօնութիւն է, և յարձակեր է անոր վրայ, զանիկա սպաննելու համար։ Հեռագիրը քաղաքապետին կողմէ ղրկուած ըլլալը ցոյց կուտայ թէ անդրոյն մէջ կառավարութիւն չկայ։

ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ԹՐԱՄՎԷՅ.— Բերայի մէջ շինուելիք ելեկտրական թրամվէյի գիծին շինութեան ձեռնարկուեցաւ այս շաբթու։ Այդ գիծը Բերաբօլսոմի օթէլին առջև փողոցէն անցնելով, Բանակյա եկեղեցիին առջև գծին պիտի միանայ։ Մօտաւորապէս Պոլսոյ կողմն ալ ելեկտրական թրամվէյի գիծ մը պիտի շինուի։

ԿՈՒՍԱԳՂՋՈՒԹԻՒՆ.— Թաքսիմի կողմը Մէզարլըք փողոցին մէջ իր մօրը հետ բնակող 13 տարեկան Թագքի անունով աղջկան մը տունը յաճախող Փօչօ անուն Յոյն երիտասարդ մը աղջկան մօր բացակայութենէն օգտուելով, անցածները աղջիկը Պոլսոյ կողմերը տարեր մը կը տանի և այնտեղ աղջկան հեղուկ մը խմցնել տալով կը թմրեցնէ և անոր պատիւը կը բռնաբարէ։ Աղջիկը սթափելով գլխուն եկածը կը հասկնայ թէև, բայց Փօչօ ամուսնութեան խոստումով աղջիկը կը համոզէ։ Աղջկան մայրը սակայն եղելութիւնը իմանալով կը դիմէ Բերայի կառավարչութեան և դատ կը բանայ Փօչօյի դէմ։ Գործը դատարանին յանձնուած է։

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ընդհ. բանտի անօրէնը կարգուեցաւ զինակիր Հիւսնի էֆ. առջի անօրէնը պաշտօնանկ եղած ըլլալով բանտին վերջին դէպքերուն հետևանօք։

ԹՆԴԱՆՕԹԻ ՊԱՅԹՈՒՄԸ.— Պոլիսի Ա. օրը կայսեր Սուլթան Ահմէտի մզկիթին մօտ պահուած իբր թէ պայթած թնդանօթի մը լուրը կը հերքուի։ Թասվիրի Էֆքեար կ'ըսէ թէ ոչ թէ Սուլթան Ահմէտի հրապարակը, այլ Գապալթաշի առջև խարխուլ Իւնալիէ զրահաւորին վրայ պատահած է պայթումը՝ հետևանք շատ լեցուած ըլլալուն։

ՍԵՐԱՍՏԻԱՅԷՆ կը հեռագրուի թէ ամսոյս 4ին քաղաքէն մէկուկէս ժամ հեռուն գտնուող Սրթին և Արշակ՝ գիւղի Իհսան էֆէնտիին վաճառասեր վիճակի մէջ վիրաւորուած և փախած ըլլալով, յիշեալ Սրթին և Արշակ յաջորդ օրը իրենց պահուըտած տեղէն ձեռք անցուած են։

ԲԵՐԱՅԻ կառավարիչ Միւհէտտին պէյ նկատելով որ մէկ քանի օրէ ի վեր դէպքեր ու ոճիրներ չտացած են, յուր անցնալ ունենալ և կասկածելի անձերը խուզարկելու և դէպքերու պատահման տեղի չտալու հրաման տուաւ ոստիկանական գոմիսէրներուն։ Միւհէտտին պէյ որոշած է շատ կարճ ժամանակի մէջ մաքրել Բերան։

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

Մուսուլի մէջ Սեպտ. 28ին արևելքէն արևմուտք երկրաշարժի սաստիկ ցնցում մը տեղի ունեցեր է. վնաս չկայ։

—Պէյրութ մեկնող անգլիական մարտանաւը երկու օր վերջ Իսկէնտէրուն վերադարձեր է։

—Տիարպէքիրի մէջ Միւնաթի ուսուցիչներէն Րէշատը Էմին անձնատուր եղեր է։

—Պէլճիքայի դեսպանը առջի օր Սուլթանին ներկայանալով, Լէոփոլտ Թագաւորին մէկ նամակը յանձնեց Ն. Վեհափառութեան։

— Վայսան Սէլամլըքի համդէսը տեղի պիտի ունենայ Տօլմա—Պաղչէի մզկիթին մէջ։

— Իտալական և ամերիկեան դեսպանները առջի օր Բ. Դուռ գալով, Եպարքոսին և արտաքին գործոց նախարարին հետ տեսակցեցան։

— Պարսկական, պուլկարական և հելլենական դեսպաններն ալ առջի օր արտաքին գործոց նախարարին հետ տեսակցեցան։

— Ելմտական խորհրդական Մ. Լօռան առջի օր Բարիզէն մայրաքաղաք վերադարձաւ։

— Եգիպտական էլմուէյիս եւ Նեճէքեիւ արապ թերթերուն Թուրքիա մուտքին մասին կրնկաւ դրուած արգելքը վերցուեցաւ։

— Սասունի մէջ շինուելիք ավերի գործարանին մեքենաները ու գործիքները մաքսատուրքէ զերծ պիտի ըլլան։

—Եպարքոսը առջի օր Կայս. Պալատ երթալով Սուլթանին ներկայացաւ։

—Դալաթիա արարեմանի մը մէջ Սուլթանէ սնուցող 18 ամեայ հրեայ աղջիկ մը պատուհանէն ինքզինք փողոց նետելով, անձնասպան եղաւ։

Ազգային Լուրեր

ՍԽԱԼ ԼՈՒՐ ՄԸ

Թուրքերէն և ֆրանսերէն թերթերը ինչպէս նաև Բիւզանդիոն ծանուցած էին թէ Հանրօգուտ Շինութեանց նախարար Պետրոս էֆ. Հալաճեան այցելութիւն տուած է Ս. Պատրիարք Հօր և այս առթիւ ինչ ինչ մեկնութիւններ տուած էին։ Արդ, մեր առած տեղեկութեան համեմատ ո՛չ թէ Պետրոս էֆ. Հալաճեան, այլ իր եղբայրը Արամ էֆէնտի այցելած է Ս. Պատրիարք Հօր, անհատական խնդրի մը համար։

ԵՐԶՆԿԷ կը գրեն թէ տեղւոյն միւթէսարրըֆը քննութիւն բացած է այն սուտ վկայութիւններուն մասին, զոր կարգ մը անձինք բրած էին Տէօրթ-Եօլի պատուելոր և երեւելի հայերուն դէմ իբրև երկու հոգի սպանութեան խնդրոյ մը մէջ մասնակցութիւն ունեցողներ։ Միւթէսարրըֆը իր քով կանչելով նոյն բամբասիչները, սուտ վկայութիւն ընողներուն անունը խնդրած և ստացած է։ Յետոյ նոյն սուտ վկաները կանչելով խիստ հարցաքննութիւն մը կատարեր է ուրկէ երևան եկած է թէ Պասեզոյոյ Անանսին կողմէ իրենց բանտարկուած միջոցին ճնշում ի գործ դրուած է իրենց վրայ, որուն հետևանքով ստիպուած են ըսել թէ. «մենք ոճիրին վայրը տեսանք զանոնք, բայց մասնակցութիւն ունեցողներն չենք գիտեր։»

ԲԱՂԱՔԱԿԱՆ Ժողովոյ անդամ Յովհաննէս էֆ. Յարութիւնեան հրաժարական մատուցած է իր պաշտօնէն որ մերժուած է Քաղ. Ժողովոյ կողմէ։ Իսկ Շիրինեան էֆ. կ'իմանանք թէ կը շարունակէ նիստերուն ներկայ գտնուիլ։

ՏԷՕՐԹ-ԵՕԼԷ կը գրեն թէ վերջերս հոն ղրկուած 200 ոսկի նպաստը գործածուած է լծկան անասուններ և սերմնցու գնելու և թէ նոյն դրամը չէ բաւած արկածեալներու պէտքերուն գոհացում տալու։ Տէօրթ-Եօլցիք նոյն դրութեամբ նպաստ կը խնդրեն։

ԱՏԱՆԱՅԻ կուսակալը հետեւեալ հեռագիրը ղրկած է Օսմ. հեռագրական գործակալութեան. «Ատանայի մէջ հայ և թուրք տարրերու միջև, կացութիւնը շատ լաւ է։ Երկու տարրերուն միջև եղբայրական յարաբերութիւններ կը հաստատուին։ Թերթերուն հրատարակած զրոյցները սուտ են։»

Ատանայի Կուսակալ
ՃԷՄԱԼ

ՀԱՅ ԴԱՂԹԱԿԱՆՆԵՐԸ.— Բանակցութեան օրով Ռուսիա և այլուր գաղթող հայերը հետզհետէ Թուրքիա վերադառնալու վրայ ըլլալով, կառավարութիւնը անոնց մասին օրինական յղուած մը խմբագրել և բաշ այմ գործել։

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ Խորհուրդը իր վերջին նիստին մէջ հետևեալ որոշումները տուած է.

1. Յովհաննէս էֆ. Հինդլեան վերջնականապէս հրաժարած ըլլալով խորհրդոյ անդամակցութենէ, անոր տեղ որոշուեցաւ ընտրել ներկայանալիք ուսուցիչ Յակոբ էֆ. Նիկողոսեանը։

2. Կրթական ընդհ. տեսչի պաշտօնին վերահաստատումը սկզբունքով ընդունուած ըլլալով Քաղաքական ժողովին կողմէ, Խորհուրդը որոշեց Յովհաննէս Հայկ էֆ.ի առաջարկել նոյն պաշտօնը, իբրև ամէնէն աւելի ձեռնհաս այս գործին։

3. Պէրպէրեան վարժարանի սանուց ընտրութեան վերաբերեալ կանոնագիր մը պատրաստուած էր նոյն վարժարանի անօրէն Օննիկ էֆ. Պէրպէրեանի կողմէ և Ս. Պատրիարք Հօր միջոցաւ յանձնուած խորհրդոյ ներկայացման։ Խորհուրդը ինչ ինչ բարեփոխութիւններով ընդունեց զայն։

4. Քաղաքական ժողովը խորհրդոյ ուշադրութեան յանձնած էր Միացեալ ընկերութեանց կանոնագիրը։ Որոշուեցաւ Յովհաննէս Հայկ էֆ.ի յանձնել անոր քննութեան գործը։ 5. Խորհրդին ներկայացող և Պետական վարժարաններ յաճախելու մտադրութիւն ունեցող ուսանողաց ներկայացուցութեան կարգադրուեցաւ Թիպպիէի, Իտադիներու, Տարիւլ Ֆիւնուն և Մէքթէպը Սէնայի վարժարաններ մտած պայմանները։ 6. Մշոյ առաջնորդին Սեպտ. 9 թուակիր մէկ յայտագրութեան վրայ վաւերացուեցաւ Մշոյ գաւառ Ուսումնական Խորհուրդի ընտրութիւնը։ 7. Սասունոյ առաջնորդարանը տեղւոյն գիւղերուն յարդ վերադարձած ըլլալը ծանուցած և բազմաթիւ ուսանողներու օտար վարժարանները յաճախելը յայտնած ըլլալով Խորհուրդը որոշեց Միացեալ Ընկերութիւններէն խնդրել որ բացառիկ կարգադրութիւն մը ընելով բաւականաչափ նպաստ մը և դասագիրքեր ուղարկելով ատոնցմէ նոյն վարժարաններուն վերաբացման։

ՈՐԲԱԽՆԱՄ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ կարգադրութեամբ Գուրգէնեան էֆ.ի ընկերանալու համար ղրկուող Սեբաստիա քննչ. Թորոսեանը, որ ուրբաթ օր պիտի մեկնէր իր պաշտօնատեղին, երեկ վերջնապէս մեկներ է։ Իրեն ընկերանալիք 4 որբուհինները, փոխանորդարանի գործակատար Սրապ էֆ.ի միջոցաւ յանձնուեցան չորեքսւ։

ՄՇՈՅ Վարդօ գաւառի Տօրոն գիւղը քիւրտերու կողմէ յարձակման ենթարկուած և եկեղեցին աւերուած էր։ Այս անգամ 50 ոսկի նպաստ խնդրուած է նոյն տեղի եկեղեցիին շինութեան համար։

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ իրատէով վաւերացուեցաւ Սասունոյի և Ճէպելը Պէրէքէթի Պատրիարք. Ատեաններուն հետևեալ վճիռները.—Երեք տարուան թիավարութեան և 10 ոսկի հատուցման՝ Մուսթաֆա, որ տղիկ 15ի օրը խուվեյթեանց միջոցին եղբ Մսաբի Կիրակոսեան անուն կին մը և անոր 16 տարեկան աղջիկը՝ Պայծառը Սուլէյմանիկի թաղը գտնուող իր տունին առջևէն կ'անցնէին, զանոնք բռնի ներս առած և Մարիամը բռնաբարած ու Պայծառին ալ կուսութիւնը պղծած էր։ Այս պարագան հաստատուած է զոհերուն ազգականներուն վրայ օգնութեան հասնողներու վկայութեամբը։ Ցկեանս թիավարութեան՝ Մէյտօզլու Մէհմէտ, Էչէկօղլու Մահմուտ, Ալի Բէհմոզլու Եուսուֆ և Հաճիլէր գիւղէն Թօսով Ապտուլլահ. 15 տարուան՝ Պիւլցօղլու Ապտուլլահ և Բէօր Ապուտ, նաև 10 տարուան՝ Նասիհ Ալի։ Ասոնք Խաստա գաւառակին Էյրի Պուչագ գիւղին մէջ մարդասպանութիւն, հրձիգութիւն և աւարառութիւն կատարած էին։

ԳԸԼԸՃՃԵԱՆ ԴՐԱՏԱՆ Ազդը տեսնել 4րդ երեսը։

Կարդալ 4րդ երեսը ՎԷՆԻՍԻ Հայ Վաճառատան յայտարարութիւնը։

Հեռագրական Բաժին

ՀՌՈՄ, Հոկտ. 19.— Բեդերսպուրկէն կը հեռագրեն թէ Ռուս կառավարութիւնը թէև չուզեր Կրետէի մէջ Թուրքիոյ շահերուն վնասել, բայց չուզեր նաև որ Յունաստանի արքայական ընտանիքին խնդիրը կնճռոտի։ Այս պատճառաւ է որ Ռուսիա քաշքշել կուտայ կրետական հարցին լուծումը՝ մինչև որ արքայական ընտանիքին խնդիրը որոշապէս պարզուի Յունաստանի մէջ։

— Սօֆիայէն կը ծանուցանեն թէ Պուլկար կառավարութիւնը ընդունած է Թուրքիոյ հետ հիւպատոսական համաձայնութեան ծրագիրը։

ԴԱՐԲԷԺ, Հոկտ. 19.—Ռուսական զօրաց վերջին բաժինը Թիֆլիզ մեկնեցաւ։

ՍՕՖԻԱ, Հոկտ. 19.— Կը հաստատուի թէ ռումանական և պուլկարական կառավարութիւնները համաձայնած են իրենց երկաթուղիի գիծերը միացնել Դանուբի վրայ շինուելիք կամուրջով մը։ Խառն յանձնաժողով մը մօտերս պիտի որոշէ այս կամուրջին տեղը։

ԲԱՐԻԶ.— Երկրորդ անգամ ըլլալով Ֆրանս. կառավարութիւնը չընդունիր որ Բարիզի Օսմ. հիւպատոս Էմիր Արսլան պէյ պաշտօնավարէ։ Առաջին անգամ չընդունուեցաւ, երբ Պորտոյի հիւպատոս կարգուեցաւ։ Օսմ. դեսպանին ևս կ'ուզէ անոր պաշտօնավարելուն համար ներկայացուցած խնդրանքը։ Արսլան հրաժարեցաւ։

—Ֆրանսական Խորհրդարանն իր նիստերը վերսկսաւ։ Երեսփ. Ժողովին մէջ երեսփոխաններուն յանձնուեցաւ ընդհանուր ելմտացոյցին տեղեկագիրը, բայց վիճաբանութիւնները տասն օրէն պիտի սկսին։ Վաղը պիտի սկսի ընտրական բարենորոգումի օրինագծին վիճաբանութիւնը։ Ծերակոյտին մէջ արտաքին գործոց նախարար Մ. Բիշօն՝ Ֆերրէրի նկատմամբ հարցապնդումի մը վրայ վիճաբանիլ մերժեց, յայտարարելով թէ Ֆրանսա պէտք չէ խառնուի օտար կառավարութեանց ներքին քաղաքականութեան։

ԱԹԷՆՔ, 19.—Երեսփ. Ժողովին կողմէ զինուորական գլխաւոր օրինագծերը քուէարկուելուն հակառակ, Յունաստանի մէջ տիրող կացութիւնը նոյնպէս մտահոգութիւն կը պատճառէ։ Կատարելապէս յայտնի է որ Ժողովը զինուորական միութեան ճնշումին տակ կը գործէ։ Դիւանագիտութիւնն և նոյն խաղի տրամադրութիւնը հրամայումէն կը վախցուի։

ՄԱՏՐԻՏ, Հոկտ. 19.—Սպանիոյ Երեսփ. Ժողովին մէջ Մ. Մօրէ յայտարարեց թէ կառավարութիւնը կորսնցուցած ըլլալով երկրին վստահութիւնը պարտաւոր է հրաժարիլ։ Վարչապետ Մ. Մաուրա պատասխանեց թէ կառավարութիւնը մինչև հիմա իր պարտականութիւնը կատարեց և նոյնպէս պիտի շարունակէ պաշտօնի վրայ մնալ ցորչափ իր կողմն ունենայ հանրային կարծիքը։

ԿԱԼԿԱԹԱ, 19.—Կալկաթա քաղաքին և արևելեան Պէնկալայի ասրիշ տեղերուն վրայ սաստիկ փոթորիկ մը ինկաւ։ Գետերը գերեվեն վրայ երթևեկող բազմաթիւ նաւեր չգտնուեցան և նաւեր ընկղմեցան։ Հեռագրական հաղորդակցութիւնները ընդհատուած են և մանրամասնութիւնները կը պակսին։

ՄԵԼԻԼԱ, 18.— Մաւրիկներն երէկ երեկոյ Նատօրի սպանիական դիրքերուն վրայ յարձակեցան։ Սպանիացիք բաւական ռմբակոծութեամբ պատասխանեցին և թշնամին կողմն վրայ այնչափ լաւ նշան առին որ յարձակողները մեծ կորուստ կրելով ետ քաշուեցան։

ԼԻԶՊՈՆԱ, 17.— Երէկ ռումբ մը պայթեցաւ Սէն-Լուի ֆրանս. եկեղեցին մօտ, որուն ապակիները, ինչպէս նաև շրջակայ տուներուն ապակիները փշրուեցան։ Եկեղեցին հիմը խախտուած ըլլալով, ոստիկանութիւնն արկածի տեղի չտալու համար արգիլեց եկեղեցին մուտքը։

ԹՈՐԻՆՕ, 19.—Նշանաւոր գրագէտ Լօմպրօզօ մեռաւ։

ԴԻՀՐԱՆ, 19.—Պարսիկ խորհրդարանը Հոկտ. 30ին պիտի բացուի։

ԲԱՐԻԶԻ ՍԱԿԱՐԱՆ

20 Հոկտեմբեր 1909

Ֆրանսական ռանդ 3%		Փոխ.	97.45
Օսմ. քոնսոլիտէ		Բաց.	93.85
»	»	Փոխ.	93.75
Երկաթուղի		»	196.25
Պանք Օթօման		»	738.—
Պոլիս Դարսայտըն		»	453.—

ԵՍԱՅԵԱՆ Դպրատան ազդը տեսնել 4րդ երեսը։

Տեսնել Դ. էջ Մկրտիչ Ֆրէնկեան Ջիմնաստիկ ազդը։

Ո՞րն է Նէօշաթէլի դիտարանին վերջին մրցման մէջ ցարդ.ստացուած բարձրագոյն թիւը շահող ժամացոյցը

Ո՞րն է Անատոլուի Օսմ. երկաթուղեաց պաշտօնական ժամացոյցը

Ո՞րն է խտալ. պետութեան երկաթուղեաց պաշտօնական ժամացոյցը

Ո՞րն է ռուսական երկաթուղեաց ժամացոյցը

Ո՞րն է յունական երկաթուղեաց ժամացոյցը

ԶԷՆԻԹ

ՔԱՂՈՒԱԾ
ՆԷՕՇԱԹԷԼԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ ՈՐՈՇՄԱՆԱԳՐԷՆ

ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
ՆԷՕՇԱԹԷԼԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՆԱՀԱՆԳԻՆ

Նկատողութեան առնելով 1905 Մայիս 23ի կանոնագիրը, որ կը վերաբերի Նահանգային աստղագիտական դիտարանին մէջ քրոնօմէթրներու և բաժակներու քննութեան, ինչպէս նաև տարեկան մրցման մէջ լաւագոյն համդիսացող քրոնօմէթրներու և բաժակներու յատկացուած մրցանակներու բաշխման։

Նկատողութեան առնելով նաև Նահանգային դիտարանի տնօրէնին տեղեկագիրը, որու կցուած են 1908 տարւոյ մէջ քննութեան ենթարկուած քրոնօմէթրներու գնացքին յաջողութիւնը և վիճակագրութիւնը։

Լսելով նաև Ճարտարարուեստի և երկրագործութեան բաժնի տնօրէնին բացատրութիւնները,

ԿԸ ՎՃՌԷ

Կանոնագրին սահմանած մրցանակները սա կերպով բաշխել 1908ի շրջանին համար

Ա. Գործարանատէրերու յատկացուած մրցանակներ գրպանի եւ նաւու լաւագոյն վեց ժամանակաչափերու համար սերիի մրցանակ։

Ա. Կ Ա Ր Գ	Թիւ դասակարգութեան
Առ. Պ. Պ. Ժ. Ֆավր-Ժակօ և Ընկ. Գործարան ԶԷՆԻԹ ժամացոյցներու, ի Լօքլ	22,8
Բոլ Պիւկէ, ի Լօքլ	22,5
Բոլ Տիլիշայմ, ի Շօ-տը-Ֆոն	22,2
Բոլ Տ. Նարտէն, ի Լօքլ	19,1
Գործարան Լոնժինի, ի Սէնթ-Իմիէ	14,2

Ի դիմաց Պետական Խորհրդոյ
Դիւանադպիր՝ ԲԷՐՐԷՆ Նախագահ՝ ՏՈՔԹ. ԲԷԹՓԱՎԷԼ

Միակ ներկայացուցիչ Տեարք Գ. ՍԱՐԳԻՍՈՖ եւ Ընկերութիւն, Պաղչէ Գափու, Ճէյալ Պէյ խան, Թիւ 16 50—2

ՂԱԼԱԹԻՈՅ ՍԱԿԱՐԱՆ

Հոկտեմբեր, 7 1909

Օսմանեան Միացեալ բաց.	Օ. Ո.		101 97
» » գոց.			101 33
Րումէլիի Երկաթուղի	Ֆր.		196 1/4
» » գոց.	Ֆր.		196 3/4
Քաղաքի Ֆոնսիէ Նշմբ. 3% 1886			310
» » » 1903			255 50
ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՅ			
Անգլ. Ոսկի	Ղրշ.		109 34
20 Ֆրանքնոց	»		87 10
20 մարքնոց	»		106 30
Բոլ Իմփէրիալ	»		90 20
Ֆլորին	»		50
Մէճիտիէ արծաթ	»		107 73
Պէշլիք	»		103 10
Մէթալիք	»		100 10

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՍԱԿԱՐԱՆՔ

ԼՈՆՏՈՆ, Հոկտեմբեր 19

Օսմ. Միաց. բացուեցաւ	Ա. Ո.	93 —
» » գոցուեցաւ	»	93 12
Օսմ. Կայս. Պանքա	»	19 25
Անգլ. Քոնսոլիտէ	»	82 63
Պուլ. Փոխառութիւն 1892	»	104 —
Հէլլէնական Ոանդ 1889	»	37 50
Ռանտ Մայն	»	9 31
Թրանսվալ	»	3 18
Ռուսական 4% 1888—89	»	90 63
Ճապոնական 4%	»	— —
Փոխան. Բարիզի վրայ	»	25 37 1/2
Դրամազեղչ	»	4 —

ԲԱՐԻԶ, Հոկտեմբեր 18

Օսմ. Միաց. բաց.	Ա. Ո.	93 95
» » գոց.	»	93 90
Րումէլիի Երկաթուղի	Ֆր.	197 75
Օսմ. Կայս. Պանքա	»	737 —
Րէժիի ծխախոտի	»	381 —
Ֆրանս. Ռանտ 3%	»	98 05
Թրանսվալ	»	82 50
Քաղաքի Լիոնէ	»	1336 —
Պանք տը Բառի	»	1755 —
Ռուսական 3% 1891	Գ. Կ.	76 80
» 5% 1906	»	105 15
Իտալական Ռանդ	Գ. Կ.	— —
Սպանիական արտաքին	Գ. Կ.	94 95
Չէք Լոնտոնի վրայ	»	25 170
Դրամազեղչ Ֆրանս. Պանքայի	»	3 —

ՏՈՔԹ. Ս. ԹԵՐՋԵԱՆ

20 տարուան փորձառու բժիշկ եւ Բարիզի հիւանդանոցներու մէջ աշխատած

Մեծ ուշադրութեամբ կը դարմանէ կուրծքի, ստամոքսի, լեարդի և աղիքի հիւանդութիւններ, որոնց և կանանց միզային ու ծննդական գործարանաց բորբոքումներ։ Հիւանդ. տղայոց մասնաւոր խնամք կ'ընծայէ։ Վիրաբուժական գործողութիւններ կը կատարէ և մանկաբարձութիւն ի գործ կը դնէ։

Հիւանդ. կ'ընդունի ամէն առաւօտ, կէս օր և երեկոյ իր տունը Պէյօղլու Ցանեաց Եկեղեցւոյ փողոց Թիւ 17, ուրիշ ժամեր կը գտնուի Սրճավաճառ Դիլի Նաւամատոյցի մօտ դեղարանը։ Աղքատները միշտ ձրիապէս կը դարմանէ։ 50—3

ՕՍՄԱՆԵԱՆ ԱՐՏՕՆԵԱԼ ՄԵԾ ԶԻՆԱՎԱՃԱՌ
ՄԿՐՏԻՉ ՖՐԷՆԿԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ
Սուլթան Համամ
Մէսատէր խան
Թիւ
30, 31, 32, 33
Մասնաճիւղ
Կարեւոր
Կեդրոններու մէջ



Վաճառատանս և մթերանոցիս մէջ ամէն տեսակ զէնք և կապար միշտ պատրաստ գտնուելուն, կարող եմ թէ մայրաքաղաքիս և թէ մասնաւորապէս գաւառի յաճախորդաց հայթայթել դիւրութեամբ և դիւրամատչելի գիներով։

10-20 կտոր հրազէններէ և իրենց կապարներէ բաղկացեալ տեսակ մը 5-10 օսմ. ոսկւոյ կանխավճարով կը հայթայթուի, որոնցմէ տրուած ամէն յանձնարարութիւնք խղճմտօրէն ու փութով կը կատարուին։

Փափաքողաց գիներու ցուցակը կը ղրկուի 20 փարայի փոխարէն իբր նամակադրոշմի ծախս։

Ամէն գրութիւնք պէտք է ղրկել՝

Մ. Ֆրէնկեան, Սուլթան Համամ, Մէսատէր խան, թիւ 30, 31, 32, 33, ներփակ գնելով պատասխանին նամակադրոշմը։

ՏՈՔԹ. ԶԱՐԹՃԵԱՆ
ՄԱՍՆԱԳԷՏ-ԲԺԻՇԿ

Կոկորդի, Քիթի եւ Ականջի
Վկայուած Բարիզի Համալսարանէն

Նախկին օգնական-բժիշկ
ՊՈՐՏՕԻ Հիւանդանոցներու

Պատիւ ունի ծանուցանել թէ՝ այսուհետեւ ի գիւղութիւն իր յարգոյ յաճախորդաց բաց ի Երեքշաբթի և Շաբաթ առաւօտներէ, ամէն օր 2-6 (ը. թ.) կը դարմանէ իրեն դիմող հիւանդները գիտական ամենավերջին մեթոտներով՝ Պոլիս՝ Կամուրջին գլուխը, Մ. Կ. Նարկիլէճեան էֆ.ի դեղարանը։

Ըստ առաջնոյն ամէն օր կէս օրէ վերջ, հիւանդ կ'ընդունի իր բնակարանը, Բերա, Ազա-ճամի Սապըք Սղաճ թիւ 6։ Երեքշաբթի և Շաբաթ օրերը կը գտնուի ժամը 8-10 (ը. թ.) Շիշլիի Մանկանց միջազգային հիւանդանոցը, և 10էն 12 (ը. ե.) նոյն հիւանդանոցին Քլինիքը, Բերա, ռուսական գեսպանատան դիմաց Սպրոս էֆ. խան, թիւ 22 ապարթըմանը։ Ջորեքշաբթի կէս օրէ վերջ ձրի։ 36—12

ՕԹԷԼ ՃԱՆԻԿ
Ա. ՔԷՕՄԻՒՐՃԵԱՆ, ՍԱՄՍՈՆ

Մաքսի մեծ պողոտային վրայ նոր կառուցուած Ողևորներու գոհունակութիւնը հրաշխաւորուած է։

ՄԵՐ ԹՂԹԱԿԻՑՆԵՐՈՒՆ

Կը խնդրուի հրատարակութեան համար ղրկուած ձեռագիրները թղթին մէկ երեսը միայն և կարելի եղածին չափ յստակ գրել։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ
Յ. ԳԸԼԸՃԵԱՆ ԳՐԱՏԱՆ

Որո՞նք են օրուան լաւագոյն ու նորագոյն հրատարակութիւնները։

Դիմեցէք Գըլըճեան Գրատուն, Կ. Պոլիս, Ջաղմաքճըլար՝ թիւ 25, և ահա ձեռքի տակ պիտի ունենաք օրուան հարցերուն և այժմէութեան համապատասխան հրատարակութեանց չորք մը, հետաքրքրական ըլլալուն չափ ամուն։

Գըլըճեան Գրատան այդ նոր հրատարակութիւններէն յիշենք՝ «Բանականին Մահը» (3 ղրշ.) «Կարմիր Գազանին Որջը» (5 ղրշ.), Սյրած քնար մը Բենիկեանի մտխիկներուն վրայ» (100 փր.), «Ազատութիւն քաղաքական և տնտեսական» (50 փր.), Փախստականը» (2 ղրշ.), «Հերոսուհիներ» (3 ղրշ.), «Հասէ» (60 փր.), «Կարմիր Օրեր» (6 ղրշ.) «Սօցիալիզմ և Հայրենիք» (2 ղրշ.), «Երկու Սրակր» (3ղշ.), «Արշալոյսի Ղօղանջներ» (5 ղրշ.), «Վրէժ» (5 ղրշ.), «Ազատ Երգարան» (5 ղրշ.), «Հայրենիքի Երգարան» (40 ղրշ.), «Կնոջ Հոգեբանութիւնը» (8ղշ.) «Վեղարաւոր Սատանա» (1 ղրշ.), «Առաջին անգամը» (50 փր.), «Շող Մոգ» (1 ղրշ.), ինչպէս նաև Ստոնայի առաջնորդ Մուշեղ եպիս.ի վերջին ընտիր գործը՝ «Հովիւին Խրատները» (8 ղրշ.) «ԵրկուՍէր (Վարդօ) (5 ղրշ.), Ստոնայի Չարքը Թղթատարով 6.50։ Կենսագրութիւն Իզմիրլեանի 2։ Շանթանի Պիտանի Գիտելեաց 6։ Բիւզանդականի Հայ Կայսրներ 3։ Պիտադրօշմ գունաւոր 1։ Բուրգերէն 3։ Աւարայրի Արծիւը 3։ Զէյթունի անցեալն ու ներկան 5։ Մահուան պատիժ կախաղաններու 1.50։ Կարիպ ախալեր 5։ Ընկեր Լաղօյի 2։ Փառուեթեան օձախ 8։ Գըլըճեան գրատան գրացուցակը ձրի։

Մի՛ մոռնաք Գըլըճեան գրատան հասցէն։ Դժգոհ չէք մնար։ 30—26

ՎԷՆԻՒՍ
Հայ Նոր Վաճառատուն

Բերա, Մեծ-Փողոց, Թիւ 424, (Ռուս. Դեսպանատան դէմ)

Ֆրանսական, Անգղիական և Իտալական վերջին նորաձեւութեամբ ճաշակաւոր և նուրբ ապրանքներ, չափազանց յարմար գիներով։

Սեզոնիս նոր ձեւ (ԱՌՋԻՆ ՈՒՂԻՂ ԵՒ ԲՐԷՆՍԷՍ), Հովանոց, Գուլպայ, Թաշկինակ, Ձեռնոց, Շապիկ այր մարդոց, Տիկիններու և Պարոններու համար Օձիքներ, Փողկապ, Դրամապանակ, կանանց Պայուսակ, Անուշահոտութիւնք ԲԻՎԷՐ, Ժանեակ, Ժապաւէն, Պաստառ, Լայլն, Լայլն։

ՆՈՒԷՐԻ ՅԱՐՄԱՐ ԱՌԱՐԿԱՆԵՐ
ՕՐՈՒԱՆ ՆՈՐԱՁԵՒՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՃԱՇԱԿԱՒՈՐ
ԿԱՆԱՑԻ ԳԼԽԱՐԿՆԵՐ

Ձոխ մթերք գլխարկի վերաբերեալ ամեն տեսակ ճիւքերու

ԾԱՆՕԹ.— Կը խնդրուի ազնիւ յաճախորդներէն որ բարեհաճին անգամ մը այցելել վաճառատանս, համոզուած գտնուելու համար գիներու աժանութեանը, ապրանքներու ազնուութեանը և նորաձեւութեանը մասին։ 36—10

ՌՕՍԻԱ
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

1831 Մարտ 20ի Կայս. Ուկազով արտօնեալ	Դրամագլուխ ամբողջովին վճարեալ 10,666,666 Ֆր.
Ընկերութեան կեդրոնատեղին Բեդերսպուրկ	Երաշխաւորութեան գումար աւելի քան 187,322,000 »
	1907ի հասոյթ 83,232,000 »
Ընկերութեան ապարանքը, Մեծ Մորսքայա 27	1881էն ի վեր Ընկերութիւնը իր ապահովագրեալներուն վճարած է 581,115,000 »

Ընկերութիւնը շատ նպաստաւոր պայմաններով կ'ապահովագրէ հրդեհի, ծովային վտանգներու և ամէն տեսակ արկածներու դէմ, կեանքի բազմազան Թարիֆաներ անմրցելի և ըսլէցաներու անհամեմատ, անկաշկանդ պայմաններ։— Նաև, երկաթուղիով և շոգենաւով ճամփորդութեանց արկածներու և նոյն իսկ ապակիներու կոտրելուն դէմ ապահովագրութիւններ։ Դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Սպարեան խան, Վէզիրաա փողոց, Ղալաթիա, Պոլսոյ Գործակ. Աչիր էֆ. փողոց, Տիլսիզ Զատէ խան, Թիւ 26, Դ. ԱՐԱԳԵԱՆ Տնօրէն Կ. Պոլսոյ մասնաճիւղին Ա. ՀԻՒՐՄՈՒԶ

ԲԱՑՈՒՄ
ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԻ
ԲԵՐԱ, Մեծ-Փողոց, Թիւ 349,
Պօն Մարշէի դէմ

Ա. ՊԱԳԱԼԵԱՆ
ՆԿԱՐԻՉ
Վկայեալ Բարիզի Գեղ. վարժարանէն
Դասերը կը սկսին Հոկտեմ. 6ին

Կ'աւանդուին գծագրութեան և նկարչութեան դասեր։
Երկսեռ փափաքող ճեմակումներ կրնան արձանագրուիլ
Աշխատանոցին մէջ մասնաւոր խնամով կը պատրաստուին նաև ամէն տեսակ նկարներ յանձնարարութեամբ 5—5

ՊԱՅՄԱՆՔ «ՀԱՅՐԵՆԻՔ»Ի

Բաժնեգիններ վճարելի են բացարձակապէս կանխիկ։— Ջնջուած բաժանորդագրութիւնք լսկոյն կը դադրին։— Դրամի ուղարկման լաւագոյն միջոցն է ՄԱՆՏԱ—ԲՕՍԹԸ։— Դրամի փոխարէն նամակադրոշմ ալ կ'ընդունուի՝ 105 ղշ.ի նամակադրոշմը 100 ղշ.ի հաշուով։— Դրամի ուղարկման ծախքերը բաժանորդաց կը պատկանին։— Թերթին պաշտօնական աստացագրին փոխարէն եղած վճարումները միայն օրինաւոր են։— Ամէն տեսակ անհատական կամ շահու վերաբերող ծանուցումներ վճարումով են և առանձինն կը սակարկուին։ Ձրի են միայն հանրօգուտ հրատարակութիւնները։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԹԵՐԹՕՆ (73)

ՊԱՐՈՒԹԱՆ

ԺԵ.

Այս վարանումներուն մէջ էր, երբ Լուի ալ Բլամրան օգնութեան հասաւ իրեն։

Տիկին Ֆօվէլ այն առաջին օրէն ի վեր որ այդ մարդը զինքը ո՛չ.քան սարսափեցուցած էր, շատ անգամներ նորէն տակից ունեցեր էր զինքը տեսնելու և հիմայ տեսակ մը համակրութիւն կը զգար անոր նկատմամբ, վասն զի ան ալ, իրեն չափ, սիրտ կը հատցնէր Ռաուլի ապագային համար։ Ուստի որչափ զայն ամենանոյն ներկայացնէր՝ իբր իր ընտանիքին մէկ հին բարեկամը, և այսպէսով տունին ընդունիլ զայն, որով ամէն տանն պիտի կրնար լուր առնել Ռաուլի վրայ։ Մորգիլը սակայն միշտ գոհացուցիչ լուրեր չէր բերեր երիտասարդին մասին։ Ռաուլ երիտասարդական ամէն կիրք ունէր, հաճոյքէ համար հոգին կուտար. պէտք էր անոր վրայ հսկել։ Այս նպատակով՝ խորհուրդ տուաւ Տիկին Ֆօվէլի որ Ռաուլն ալ իր տունը ընդունի։ Չէ՞ որ իրենք Սան-Ռէմոյի մէջ ալքատ աղքականուհի մը ունէր Տիկին Լակռուանուհով,զոր Պ. Ֆօվէլ բնաւ չէր ճանչնար. պէտք էր այդ սղան ներկայացնել Պ. Ֆօվէլի իբր այն կնոջ զաւակը, զոր մայրը Բարիզ կը ղրկէր և Տիկին Ֆօվէլի պաշտպանութեանը կը յանձնէր։

Տիկին Ֆօվէլ նախ զայրացաւ, լացաւ, ընդդիմացաւ այս գաղափարին, բայց մորգիլը համոզեց զինքը, ապացուցով որ եթէ Ռաուլը փրկելու այս միջոցը ի գործ չի դնէ, ինքն ալ ամէն բան երևան պիտի հանէ։

Եւ արդարև ութ օր ետքը Ռաուլ, այլ Լակռու անուամբ, ներդաշնակորէն տունը կ'ընթրէր՝ Տիկին Ֆօվէլի ու Մադլէնի միջեւ։

ԺԶ.

Անտարէ Ֆօվէլ շատ սիրալիր ընդունելութիւն ըրաւ այդ աղքականին, որուն անունը չէր լսած մինչև այն ատեն։ Ռաուլ ալ գիտցաւ աղէկ վարուիլ և ութ օրուան մէջ սիրելի եղաւ ամբողջ տունին, անոր երկու զաւակներուն և Բրոսբէր Պերթոմիի, որ գիշերները Պ. Ֆօվէլի տունը կ'անցընէր։ Տիկին Ֆօվէլ այսպէսով ազատ էր Բլամրանի հնազանդած ըլլալուն, բայց այդ ուրախութիւնը կարճատև եղաւ։

Ռաուլ Բարիզի կեանքին մէջ նետուած էր և անդադար դրամ կը քաշէր մօրմէն։ Երեք ամսուան մէջ փոքրիկ հարստութիւն մը հալեցուց։

Եւ ի՛նչ եղաւ իր զարմանքը, երբ օր մըն ալ իմացաւ որ Ռաուլ իր ամուսինէն 10,000 ֆրանք փոխ առած էր։ Այս բանը իմաց տուաւ Բլամրանի, որ իբր թէ զայրացաւ, բայց Տիկին Ֆօվէլ չուշացաւ կասկածելու որ Ռաուլ և Լուի գործակից էին։

Բլամրան օր մը յանկարծ յայտարարեց Տիկին Ֆօվէլի թէ պէտք էր որ ամուսնանար Մադլէնի հետ, վասն զի անոր դրամօժիտին պէտք ունէր իր և Ռաուլի գործերը կարգադրելու համար։ Տիկին Ֆօվէլ հաստատապէս մերժեց Բլամրանի առաջարկը և ապահնացաւ որ ամէն բան պիտի խոստովանի ամուսնոյն։

Բայց այն րոպէին, որ ինքզինքն աւանձին կը կարծէր Բլամրանի հետ, հոյն դառնալով տեսաւ որ Մադլէն հոն էր՝ դեղին գեղին կտրած, սրձանի պէս սառած, աչքերը արցունքով լեցուած։

—Այս մարդուն պէտք է հնազանդիլ, ըսաւ։

—Ինչ, գոչեց տիկին Ֆօվէլ սարսափահար, իմացա՞ր...

—Ամէն բան։

—Եւ կ'ուզես ինքզինքդ զոհե՞լ։

—Մնրադիր կը խնդրեմ որ թող տաք ինծի ձեզ փրկելու։ Այդ մարդը կ'ատեմ ու կ'արհամարհեմ իբր մարդոց ամէնէն վատը, բայց պէտք է որ իր կինը ըլլամ։

—Հապա Բրոսբէ՞րը...

—Վաղը ամէն բան կ'ուզեմ անոր հետ։

Բլամրան մեկնեցաւ, տիկին Ֆօվէլ շատ ընդդիմացաւ, բայց ի զուր։ Նոյն իրիկունը Բլամրան նամակ մը առաւ տիկին Ֆօվէլէն, որով կը ծանուցանէր թէ ուզածը պիտի ըլլայ, բայց քիչ մը սպասելու է։ Նամակին ներքև Մադլէն ալ սող մը բան գրած էր և նոյն խոստումը կը կրկնէր։

Բլամրան անձամբ եկաւ և ըսաւ որ քանի որ իրենց հաւանութիւնն առած է, կրնայ սպասել։

Այս՛, ինքը կրնար համբերել, բայց Ռաուլ կ'ուզէր սաստիկ ամուսնութիւնը փութացնել։

Այդ միջոցին Տիկին Ֆօվէլ ժամանակէն կանուխ գեղ գնաց։ Ռաուլ ալ Վէզինէ գնաց, և միայն սատկ ուզելու համար մայրը տեսնելու կ'երթար։ Իսկ Բլամրան բոլորովին հեռու կը մնար և գիտուածով էր որ օր մը Ֆօվէլի տունը մէկ ընթրիքին հրաւիրուեցաւ։

Սեղանին տակ Պ. Ֆօվէլ հարցուց Բլամրանի.

—Պարոն մարքիզ, ձեր անունը կըրող ուրիշ ազգական ունի՞ք։

—Ոչ, պարո՛ն։

—Ութ օր է որ ուրիշ Բլամրանի մարքիզ մը կը ճանչնամ։

—Վա՛յ, ըսաւ Բլամրան՝ քիչ մը սարսռալով, այդ մարդը, ո՛վ որ ալ ըլլայ, անոր մարքիզութիւնը քիչ մը կասկածելի կ'երևայ ինծի։

—Մարքիզ ըլլայ կամ ոչ, ինծի այնպէս կու գայ որ այդ Բլամրանը իր տիտղոսին պատիւ կը բերէ։

—Իրա՞ւ։

—Կարծեմ բաւական ալ հարուստ ըլլալու է. Թղթակիցներէս մէկը ինծի յանձնարարեց որ անոր հաշուին 400,000 ֆրանք գանձեմ։

Մադլէն և Տիկին Ֆօվէլ նշմարած էին Լուիի ցնցումները և տեսեր էին որ Ռաուլի հետ ակնարկներ կը փոխանակէ։

—Այդ մարքիզը վաճառական է։

—Ձեզ գիտեր. գիտցածս սա է որ Հավրի նաւատէրները 400,000 ֆրանք պիտի վճարեն անոր՝ երբ որ Պրազիլիայէն եկած նաւու մը բեռները ծախուին։ Եթէ կ'ուզէք, անունն ալ կըրնամ ըսել ձեզ... Կատեծո՛ն տը Բլամրան է և հիմայ Օլորոն կը բնակի։

Լուի, որ ժամանակ ունեցած էր ինքզինքը ժողվելու, ըսաւ.

—Կատեծո՞ն. հա՛, հասկցայ. Հավրը բնակող մէկ հօրաքրոջս զաւակն է, որուն բուն անունը Պուասօ է. բայց ինքը մօրը անունը կը գործածէ։

—Ինչ որ է, կարծեմ շատ չանցած ձեզ մէկտեղ ճաշել պիտի տամ, վասն զի այդ 400,000 ֆրանքին 100,000ը միայն տուաւ և մնացեալին համար ըսաւ որ պահեմ. ըսել է թէ Բարիզ գալու միտք ունի։

—Շիտակը գոհ պիտի ըլլամ զայն տեսնելով։

Ցեառյ ուրիշ բանի վրայ խօսեցան և Լուի այդ միջադէպը բոլորովին մոռցած ըլլալ ձևացուց։

Անկէ ետքը տիկին Ֆօվէլ և Մադլէն ծայրայեղ յուզման մէջ էին։

Ճաշէն ետքը Բլամրան և Ռաուլ պահ մը առանձին մնացին։

—Ի՞նչ է, ըսաւ Ռաուլ։ Ամէն բան կորսուեցա՛ւ, փախչինք։

Բայց Լուի այդ կարծիքէն չէր։ Անմիջապէս իր ծրագիրը պատրաստելով՝ որոշեց երկթալ կղպայրը մտնել։ Եթէ անոնք գիտէր որ Վալանթին Ֆօվէլի հետ ամուսնացած էր, արդարև ամէն բան կորսուած էր, բայց եթէ չէր գիտեր, դեռ փրկութեան յոյս կար։ Ռաուլի պատուիրեց որ իր բացակայութեան միջոցին օրինակելի զաւակ մը ըլլայ, մօրմէն սատկ չուզէ և կրցածին չափ իրեն դէմ խօսի։

(Շարունակելի)